

ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՑՆԵՐԸ

Իրանահայության քաղաքացիական իրաւունքները

Պետական իշխանութիւն և ազգային իշխանութիւն

Հասարակական կազմակերպութիւններ և միութիւններ

Ժողովրդավարական է մեր թեմերի կանոնադրութիւնը

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 **Համայնք**
- 3 **ձեռասպանության քրեականացման նախագիծը սահմանադրական խորհրդում**
- 4 **Իրանի իսլամական յեղափոխության 33-րդ տարեդարձը**
- 6 **«Բարգաւաճ Հայաստան»-ը համամասնական ընտրակարգի կողմ**
Գայիանէ Մկրտչեան
- 7 **Իրանի դեմ հաւանական հարւածը**
Արիս Դազիմեան
- 14 **Վասակ Մադաթեան՝ դրամատուրգ**
Բախտիար Յովակիմեան
- 15 **Պատմածք՝ Ամբարձիչներ**
Շանթ Բաղրամեան
- 17 **Հաղարծին վանքը**
Արմինէ Մելիք-Իսրայելեան
- 20 **Ի՞նչ ուտենք եւ ... ինչո՞ւ (բ. մաս)**
Դոկտ. Մեհմեթ Օզ
- 24 **Մարզանք**
Արման Տէր Ստեփանեան
- 26 **Ժամանց**

Մշակութային եւ Հասարակական

Յոյս

Երկշաբաթերթ

Ե սարի, քի.116, Փետրար 8, 2012,
1200 քուման
Հայաստանում 320 դրամ

8 Իրանահայ համայնքի հասարակական կառույցները



Պ ա Ր Ա կ ե Ր Ե Ն ք ա ժ ի ն

- 2 **Այս համարի հայերէն էջերում** **հերքման քրեականացման նախագիծը Ֆրանսիայի Սենատում** **սահմանադրական յեղափոխության պատմագրության մէջ Ալի Թաթարի**
- 4 **Հայ գաղթականները Ռուսաստանում եւ Թուրքիայում** **10** **Վերնոյն ու Մալաքեանը ինչպե՞ս համակերպւեցին միմեանց**
- 7 **ձեռասպանության** **12** **Հայերի տեղը Իրանի**

<p>Յոյս</p> <p>Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտոնատեր՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմեն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարվեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝ Քարմեն Ազարեան</p> <p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Տէր Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քարին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ 66495208</p> <p>hooyes@inbox.com www.hooyes.com</p>
---	---	---	---

ԻՐԱՆԱԿԱՆ ՄԱՍՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ԲԱՍԿԵԹՔՈՒԻ ԽՄԲԻ ԱՆՂԱՍՈՒՅԻ ԷՂՆԱ ԻՍԱՅԵԱՆԸ ԾԵԾԵԼ Է ՄՐՋԱՎԱՐԻՆ

ԱՐԱՐԱՏ՝ ԾԵԾԿՈՏՈՒՔ ՉԻ ԵՂԵԼ, ԱՅԼ ՊԱՏԱՀԱՎԱՆՈՒԹԻՒՆ

Իրանական լրատվամիջոցների հաղորդման համաձայն, ուրբաթ յունվարի 27-ին, «Արարատ» եւ Ղազվինի «Մեհրամին» աղջկանց բասկետբոլի խմբերի մրցութեան ընթացքում, տեղի է ունեցել բախում նրցավարի եւ «Արարատ» թիմի անդամուհիներից՝ Էդնա Իսայեանի միջեւ: Այս մասին «Արարատ»-ի հանրային կապը հրապարակել է երկու հաղորդագրութիւն, որոնք ներկայացնում ենք ստորեւ:

30 Յունար 2012 (հատուած)

Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան աղջկանց բասկետբոլի խումբը նպատակադրել է նոյն վճռականութեամբ կանգնած մնալ իրեն վայել ախոյեանութեան պատւանդանի վրայ, ու հզօրութեամբ շարունակել իր մրցութիւնները Իրանի առաջնակարգ լիգայի մրցութիւններում:

Վերջին երկու օրերի ընթացքում, տարբեր լրատվամիջոցների եւ շրջանակների միջոցով խեղաթիւրւած լուրեր են տարածել անցեալ ուրբաթ յունվարի 27-ին Սպահանի «Ֆուլադէ Մոբարաթէ» մարզահամալիրում, Արարատի եւ Մեհրամին Ղազվինե խմբերի մրցութեան ընթացքում տեղի ունեցած պատահարի կապակցութեամբ:

Թէեւ Յ.Ս.Ա.Կ.-ն բոլորովին նպատակ չունի «Կարգապահական Կոմիտէ»-ի վճռի յայտարարումից առաջ կանխադատութեան դիմել, սակայն պարտք է համարում, դատապարտելով մարզական ոգուն անհաշտ որեւէ դէպք մարզական վայրերում, մի շարք պարզաբանութիւններ կատարել:

Արդէն առաջնակարգ Լիգայի աղջկանց բասկետբոլի մրցութիւնների սեզոնի սկզբից, ինչ որ ձեռքեր ու շրջանակներ միտում էին խանգարել «Արարատ»-ի աղջկանց բասկետբոլի յառաջխաղացքը:

Նախ նշւած խաղի ընթացքում, որեւէ ֆիզիկական բախում տեղի

չի ունեցել եւ այն ինչ կատարել է Իրանի աղջկանց բասկետբոլի Իրանի ազգային հաւաքականի խմբի կապիտան եւ Յ.Ս.Ա.Կ.-ի խմբի անդամ Էդնա Իսայեանի եւ իրաւարար Մարիամ Բաբայիի միջեւ ֆիզիկական բախում չի եղել, այլ՝ պատահականութիւն, սակայն ամէն դէպքում Յ.Ս.Ա.Կ.-ն դատապարտում է այդ: Ամէն դէպքում, Կազմակերպութիւնը իրեն է վերապահում օրինական-դատական միջոցների դիմելու իրաւունքը:

Անկախ այս հարցից, ոչ միայն սեզոնի սկզբից, այլ հէնց նոյն մրցութեան սկզբից, տարբեր շրջանակներ ճնշիչ մթնոլորտ ստեղծելով «Արարատ»-ի աղջիկների համար, փորձեցին հոգեկան տագնապի մատնել նրանց, որին դիմանալը բաւականին դժւար է մանաւանդ նման լարւած ու խանգարիչ մթնոլորտում, որն սկսել էր հէնց «Արարատ»-ին ուղղւած սպառնալիքներով:

Աւելի վատն այն, որ առանց «Կարգապահական Կոմիտէ»-ի վճռի յայտարարման, բասկետբոլի ֆեդերացիայի աղջկանց բասկետբոլի նախագահուհին յայտարարում է, որ ենթական էդնա Իսայեանը, պատժի կը ենթարկի: Մինչդէռ ոչ վճիռ է կայացել, ու ոչ էլ նա այդպիսի յայտարարութիւն անելու իրաւունքն ունէր:

Հարկ է յիշեցնել, որ Յ.Ս.Ա.Կ.-ի աղջկանց բասկետբոլի խումբը շարունակելու է իր մրցութիւնները՝ երկրի առաջնակարգ լիգայի

խաղերում:

2 Փետրւար 2012

Հ. Ս. «Արարատ» կազմակերպութիւնը շեշտելով բարոյագիտական եւ քաղաքավարական սկզբունքների պահպանումը մարզական հրապարակներում իր ցաւն է յայտնում «Արարատ» եւ Ղազվինի «Մեհրամին» խմբերի բասկետբոլի մրցման ընթացքում տեղի ունեցած անախորժ պատահարի կապակցութեամբ ու կրկին շեշտում, որ սոյն դէպքը ծեծուկն է չի եղել: Ի նկատի ունենալով, որ բարոյական եւ մշակութային սկզբունքների պահպանումը Կենտրոնական վարչութեան հիմնական նպատակներից եւ միութեան աշխատառճի կարգախօսն է, մրցավար տկն. Բաբայիի, բասկետբոլի ֆեդերացիայի, մարզական հասարակութեան եւ միութեանս ու յիշեալ խմբի հովանաւոր հայ մարզասէրների ներողամտութիւնն ենք հայցում այս անցանկալի եւ տհաճ պատահարի համար:

Համաձայն միութեանս կանոնադրութեան բարոյական սկզբունքների պահպանումը խուսափել կոպտութիւն-բրտութիւններից եւ անքաղաքավարի շարժումներից՝ ամենահիմնական ու էական հիմքն էր եւ է 67 տարւայ անցեալ ունեցող այս կառոյցի մշակութային եւ մարզական գործունէութեան. այդու՝ «Արարատ» կազմակերպութիւնը, որի կարեւոր նպատակներից է մշակութակերտումը, իր ցաւը յայտնելով սոյն անախորժ պատահարի համար՝ յայտնում է իր վճռականութիւնը՝ շարունակելու այս մրցումները՝ երկրի օրէնքների եւ կանոնների սահմաններում եւ խաղաղ ու ոչ-տագնապալի մթնոլորտում:

ՃԵՂԱՍԴԱՆՈՒԹԵԱՆ ՔՐԷԱԿԱՆԱՅՄԱՆ ՕՐԷՆՔԸ ՈՒՂԱՐԿԻԷԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ֆրանսիայի ազգային ժողովում եւ ծերակոյտում (սենատում) վաւերացւած ցեղասպանութիւնների քրեականացման նախագիծը ուղարկել է այդ երկրի սահմանադրական խորհուրդ: Դա նշանակում է, որ Ֆրանսիայի նախագահ՝ Նիկոլա Սարկոզին այժմ, մինչեւ այդ խորհրդի վճիռը, չի կարող ստորագրել այն: Այս մասին ԶՅԴ-ի Բիւրոյի «Յանրային կապերի գրասենեակ»-ը հրատարակել է մամուլյ հաղորդագրութիւն, ուր մանրամասն բացատրւած է այդ նախագծի վերջին դրութիւնը: Մեր ընթերցողների տեղեկութեան համար վերատպում ենք այդ հաղորդագրութիւնը:

Մամուլի հաղորդագրութիւն

Երեւան, 31 յունւարի, 2012 - ԶՅԴ Բիւրոյի Յայ Դատի եւ քաղաքական հարցերի գրասենեակը տեղեկացնում է, որ Ֆրանսիայի սենատի 76 անդամ դիմել են երկրի Սահմանադրական խորհուրդ՝ վիճարկելով Ֆրանսիայի կողմից ճանաչւած ցեղասպանութիւնները (ներառեալ՝ Յայոց Ցեղասպանութեան) ժխտումը Ֆրանսիայում քրեականացնող սենատի յունւարի 23-ին ընդունած օրինագիծը: Նոյն նպատակով Սահմանադրական խորհրդին են դիմել Ֆրանսիայի խորհրդարանի 65 պատգամաւորներ:

Ֆրանսիական օրէնսդրութեան համաձայն՝ Ֆրանսիայի նախագահ Սարկոզին կարող էր խորհրդարանի եւ սենատի կողմից հաստատւած օրինագիծը ստորագրել եւ օրէնքի վերածել յունւարի 24-ից առ այսօր: Սակայն, Սարկոզին նախընտրել է սպասել մինչեւ իր իրաւասութեան 15-օրեայ ժամկէտի աւարտը, ինչն էլ հնարաւորու-

Սարկոզին կարող էր անմիջապէս ստորագրել սենատի վաւերացրած նախագիծը



թիւն է տւել, որ օրինագծի ընդդիմախօսները ակտիւանան եւ դիմեն Սահմանադրական խորհուրդ:

Ինն անդամներից (ներառեալ՝ հանրապետութեան նախկին երկու նախագահները, ի պաշտօնէ) բաղկացած Սահմանադրական խորհուրդը պարտաւոր է օրինագծի Սահմանադրութեան համապատասխանելու մասին իր տեսակէտը յայտնել մէկ ամսւայ ընթացքում: Սակայն, մէկ ամիսը կարող է փոխել ութ օրւայ, եթէ կառավարութիւնը հանդէս գայ մնան պահանջով: Սահմանադրական խորհուրդը կարող է ընդունել երեք հնարաւոր որոշումներից մէկը.

1- Օրինագիծը համապատասխանում է Սահմանադրութեանը: Այս դէպքում հանրապետութեան նախագահի ստորագրութիւնից յետոյ՝ այն կը դառնայ օրէնք:

2- Օրինագիծը ինչ-որ մասով կամ մասերով չի համապատասխանում Սահմանադրութեանը: Այս դէպքում օրինագիծը կը վերադարձի խորհրդարան, այն բարեփոխելու եւ Սահմանադրութեանը համապատասխանեցնելու համար: Այս տարբերակը կարող է խնդիրներ առաջացնել, քանի որ մէկ ամսից Ֆրանսիայի խորհրդարանը կը մեկնի արձակուրդ, որպէսզի նա-

խապատրաստի նախագահական ընտրութիւններին:

3- Օրինագիծը ամբողջութեամբ հակասահմանադրական է: Այս դէպքում օրինագիծն այլեւս չի քննարկի եւ օրէնքի ուժ չի ստանայ, եթէ հանրապետութեան նախագահը չպնդի, որ հարցը դարձեալ մտնի խորհրդարան:

Այսօրւանից սկսած, մինչեւ մէկ ամիս, մինչեւ Սահմանադրական խորհրդի որոշում կայացնելը, Սարկոզին չի կարող ստորագրել օրէնքը:

Սահմանադրական խորհրդին դիմող սենատի անդամների մեծ մասը ծայրայեղ ձախ կուսակցութիւններից (կոմունիստներ, մարքսիստներ, եւ այլն) եւ նախկին Կառնաչներից (այժմ՝ Էկոլոգիականներ) են: Յաջորդ մեծ խումբը կենտրոն աջ կուսակցութիւններից են: Կան նաեւ Սարկոզիի իշխող կուսակցութիւնից (UMP) եւ սոցիալիստներից պատգամաւորներ: Ֆրանսիայի խորհրդարանի դիմողների մեծ մասը Սարկոզիի կուսակցութեան անդամ, բայց Սարկոզիի հակառակ խմբակցութեան պատկանող պատգամաւորներ են: ԶՅԴ Բիւրոյի

Յանրային կապերի գրասենեակ



ԽԱՆԴԱԿԱՌՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԻՏՔԻ ԱՆՀԱԻՏԱՆԼԻ ՕՐԵՐ





ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԱՅՅԸ ԷՄԱՄ ԽՈՄԵՅՆԻԻՆ

Լեւոն Ահարոնեան

Հայերի Գերաշնորհ Սրբազանը 1979 թականի Մարտի 29-ին այցելեց Էմամ Խոմէյնիին: Այդ հանդիպման ընթացքում հայերի առաջնորդն Իրանի իսլամական յեղափոխութեան յաղթանակի առթիւ շնորհաւորեց Էմամին ու Իրանի ժողովրդին եւ յայտնեց հայերի պատրաստակամութիւնը շարունակելու օժանդակել յեղափոխականներին:

Սրբազանին լսելուց յետոյ՝ Էմամ Խոմէյնիին ասաց. «Այս յեղափոխութեան ձեռքբերումներն իրենց դրական ազդեցութիւնը կունենան նաեւ Իրանի փոքրամասնութիւնների վրայ: Իսլամը բարեացակամ է ուրիշ գաղափարախօսութիւնների ու կրօնների նկատմամբ»: Հանդիպման վերջում հայերի առաջնորդը մի գրութիւն յանձնեց Էմամ Խոմէյնիին, որի մէջ շեշտուած էր, որ Իրանի թշնամիները ոչ միայն երկրի հարստութիւնն են կողոպտում, այլեւ այլասերում են ժողովրդի հաւատն ու հոգին եւ երկրում անառակութիւն տարածում: Պայքարը միայն միապետութեան ու գաղութարարութեան դէմ չէ, այլ արմատական պայքար է ապականութեան դէմ, պայքար է արդարի եւ անիրաւի միջեւ: Այդ նամակում նշուած էր. «Ոմանք, ովքեր

դեռ իսլամական շարժման էութեանն անծանօթ են, «քրիստոնեաների հարստութիւնն ու գոյքը պահպանելու» քօղի տակ կամենում են քրիստոնեաներին ու մուսուլմաններին պառակտել: Բայց Իրանի հայերն արթուն են ու կը չէզոքացնեն այդ նենգագործներին: Իրանահայութիւնը, յեղափոխութեան առաջին օրերից միանալով իր մուսուլման եղբայրներին, մասնակցել է գործադուլներին, համահաւաքներին ու քայլարշաւներին: Յեղափոխութեան բոլոր լուրերը արտացուէլ են հայկական «Ալիք» օրաթերթում: Հայերն էլ ակտիւ մասնակցել են այդ մեծ յեղափոխութեանը ու տւել են բազմաթիւ զոհեր: Իրանահայերը, իրենց մուսուլման եղբայրների հետ միատեղ, այդ պայքարը կը

շարունակեն մինչեւ այն պահը, երբ երկրում արմատախիլ լինեն անարդարութիւնն ու բռնութիւնը»:

Այդ նամակի վերջում նշուած էր, որ իրանահայերն Իրանի անկախութիւնն ու միասնականութիւնը պաշտպանելը համարում են իրենց ազգային գերպարտականութիւնը:

Նշեմ նաեւ, որ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Արտակ արք. Մանուկեանն ու Թեմական խորհրդի ատենապետ դոկտ. Նահապետեանն, առանձին կոչելով ժողովրդին յորդորեցին, որ անպայման մասնակցեն Իսլամական Հանրապետութեան հաստատման քւէարկութեանը:

Աղբիւր՝ «Փոթորկոտ կեանքիս օրերը» գիրքը



«ԲԱՐՁԱԿԱՃ ՀԱՅԱՍՏԱՆԸ» ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՏՐԱԿԱՐԳԻ ԿՈՂՄ

Գայիանէ Սկրոջեան



ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՍԱԿԳՈՒԹՅՈՒՆ

Կոալիցիոն «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան խորհրդարանական խմբակցութիւնը միացել է ընդդիմադիր ՀՀԴ եւ «Ժառանգութիւն» խմբակցութիւնների նախաձեռնութեանը՝ ԱԺ-ում խորհրդարանական լսումներ հրաւիրելու համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերի թեմայով:

ԱԺ «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան քարտուղար Արամ Սաֆարեանը ստորագրել է խորհրդարանի նախագահ Սամել Նիկոյեանին ուղղած դիմումի տակ, որով խնդրում են խորհրդարանական լսումներ հրաւիրել՝ ամբողջութեամբ համամասնական ընտրակարգի անցնելու համար: Սաֆարեանն ասում է, որ դեռեւս 2007-ի գարնանն իրենց կուսակցութեան կողմից ընդունւած ծրագրով միաձայն քւէարկել են

100-տոկոսանոց համամասնական ընտրակարգին անցնելու սկզբունքի օգտին: «Կուսակցութեան քաղաքական խորհրդում եւ խորհրդարանական խմբակցութիւնում այս հարցի վերաբերեալ դեռ քննարկումներ չեն եղել եւ որոշում չի ընդունւել: Մեր ձգտումը՝ միանալ այս առաջարկին, պայմանաւորւած է մեր ցանկութեամբ՝ հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրել այս հարցի վրայ, լսել կողմ եւ դէմ կարծիքները եւ նոր դրանից յետոյ հարցը դնել քաղաքական քննարկման», - ասում է Սաֆարեանը: Առաջարկում է ազատ ու արդար ընտրութիւնների կազմակերպման եւ վերահսկման նպատակով ընտրական օրէնսգրքում վերացնել մեծամասնական ընտրակարգը՝ անցում կատարելով 100-տոկոսանոց համամասնական ընտրա-

կարգի: «Քաղաքական կուսակցութիւնը, եթէ իսկապէս քաղաքական կուսակցութիւն է եւ ունի գաղափարական յենք, անպայման ձգտել է եւ ձգտելու է համամասնական ընտրակարգով առաւելագոյն տեղերի: Մնացած տարբերակները, որպէս կանոն, քննարկում են այն ուժերը, որոնք հիմնականում մտածում են՝ ոնց պէտք է Ազգային ժողովի պատգամաւոր դառնան փողի իշխանութեամբ, վարչական լծակով կամ այլ ոչ ժողովրդավարական ձեւերով», - ասում է ՀՀԴ խմբակցութեան անդամ Արծիկ Մինասեանը: Ազգային ժողովի 131 պատգամաւորներից 90-ը գործող ընտրական օրէնսգրքով ընտրուում են համամասնական, 41-ը՝ մեծամասնական ընտրակարգով:

Աղբիւր՝ www.armenianow.com

ՀԱԿ-Ը ԻՐ ԱՆՂԱՄ ԿՈՒՄԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԻՅ ԿԱԶՄԻԱԾ ԴԱՇԻՆՔՈՎ ԿԸ ՄԱՍՆԱԿՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Աստղիկ Բեղեւեան

Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսը (ՀԱԿ) առաջիկայ ընտրութիւններին կը մասնակցի Կոնգրեսի անդամ կուսակցութիւններից կազմւած նախընտրական դաշինքով:

«Կոնգրեսը [խորհրդարանական ընտրութիւններին] կը գնայ

դաշինքով՝ Կոնգրեսի քաղխորհրդի անդամ 18 կուսակցութիւնների դաշինքով», - ասաց Յովհաննիսեանը:

Յովհաննիսեանը տեղեկացրեց, որ ՀԱԿ-ի քաղխորհուրդը «համամասնական ցուցակի ձեւաւորման սկզբունքների եւ մեծա-

մասնական մասնակցութեան շուրջ քննարկումներ կը սկսի»:

Հարցին, թէ ո՞վ կը գլխաւորի ՀԱԿ-ի համամասնական ցուցակը, Յովհաննիսեանը պատասխանեց. - «Դա քննարկման առարկայ եւ նիւթ չէ, միանշանակ՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը»:

ԻՐԱՆԻ ԴԵՄ ՇԱԽԱՆԱԿԱՆ ՀԱՐԻԱԾԸ ԿԱՐՈՂ Է «ՍԱՌԵՅՆԵԼ» ՀԱՅ-ԿԱԿԱՆ ՆԱԽԹԱԳԱՉԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ

Արիս Դազինեան

Լրատւական գործակալութիւններու հաղորդմամբ՝ ԱՄՆ ՁՈՒ շտաբներու պետերու միաւորուած կոմիտէի ղեկավար գեներալ Մարտին Դենփսին այցելել էր Իսրայէլ՝ քննարկելու Իրանին հարւածներ հասցնելու հնարաւորութեան հարցերը:

Դենփսին հասկացրել է, որ «ԱՄՆը խնդրում է Իսրայէլին ինքնուրոյն չգործել Իրանի դէմ»: Սակայն իրական հարւած պատրաստում է, թէ՞ ոչ՝ այդ մասին, բնականաբար, չի հաղորդում:

Ինչպէ՞ս կանդորադառնան Իրանի դէմ ռազմական գործողութիւնները Յայաստանի վրայ: Յայաստանի համար բացառիկ նշանակութիւն ունի Իրանի Իսլամական Հանրապետութեան եւ Հնդկական օվկիանոսի ջրատարածքի նաւահանգիստների հետ կապող երկաթգծի կառուցման հեռանկարը: Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման մասին վերջնական պայմանաւորութիւն ձեռք բերեց 2007 թ.: Արդէն նախապատրաստել է երկաթգծի կառուցման նախագծի տեխնիկատնտեսական հիմնաւորումը (երկարութիւնը կը կազմի շուրջ 540 կմ, որից անելի քան 460 կմ-ը ընկնում է Հայաստանի տարածքին. ամենայն հաւանականութեամբ երկաթգծը կը կառուցւի Գազարին-Գաւառ-Մարտունի-Ջերմուկ-Վայք-Սիսիան-Կապան-Մեղրի երթուղիով, իսկ իրանական հատուածը կը կառուցւի մինչեւ Մերանդ կայարան): Այս կարելորագոյն նախագիծը վտանգի տակ կը լինի: Հայաստանն ու Իրանը ձեռնամուխ են եղել նաեւ մէկ այլ խոշոր նախագծի՝ Իրանի Թաւրիզ քաղաքից մինչեւ հայկական Երասխ կայարան նաւթատարի կառուցման իրականացմանը: Բնական է, որ



դա էլ «կը սառեցի»: Ծանր հարւած կարող է հասցել Իրան-Հայաստան գազամուղի կայուն շահագործման հեռանկարներին, որի առաջին հատուածը բացւեց 2007 թ. Մարտին Ազարակ սահմանամերձ քաղաքում՝ երկու երկրների նախագահների ներկայութեամբ: Այդ գազամուղի նշանակութիւնն անհնար է գերագնահատել, եթէ յիշենք, թէ 1992 թ.-ից ինչ երկար ճանապարհ է անցել նախագիծը, որը հնարաւորութիւն է տալիս նազագոյնի հասցնել Հայաստանի կախաւածութիւնը բնական գազի մատակարարման միակ աղբիւրից՝ Ռուսաստանից՝ բաւական անկայուն Վրաստանի տարածքով: Բացի այդ, որոշակի զարգացումների դէպքում Թեհրանը կարող է կորցնել իր «ուժեղ գործօնի» նշանակութիւնը յատկապէս իսլամական տարածաշրջանում: Բաւական է նշել, որ հէնց ուժեղ իրանական գործօնն էլ խանգարեց 1991-1994 թթ. Ադրբեջանի եւ Թուրքիայի ջանքերին՝ որը մահմեդական աշխարհով ջիհադ յայտարարել հայերին եւ Ղարաբաղեան պատերազմին կրօնական երանգաւորում հաղորդել: Այսպիսով, Իրանի դէմ ագրեսիայի ցանկացած ձեւ կարող է սառեց-

նել բոլոր նախագծերը, չիաշուած անելի արմատական սցենարների զարգացման դէպքում քաղաքական հետեւանքները: Սակայն կը լինի՞ արդեօք պատերազմ: Նոյնպիսի բարդ իրավիճակ Իրանի շուրջ ստեղծել էր 2004-2005 թթ., երբ գրեթէ ամէն շաբաթ ազդարարում էին օդային հարւածներ հասցնելու «ստոյգ ժամկէտները»: Այն ժամանակ լիցքաթափման գործում կարելոր դերակատարում ունեցան Չինաստանն ու Ռուսաստանը՝ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի՝ վետոյի իրաւունք ունեցող մշտական անդամները: 2004 թ. Պեկինի եւ Թեհրանի միջեւ ածխաջրածինների մասին պատմական համաձայնագիր կնքեց, որից անմիջապէս յետոյ Չինաստանը յայտարարեց, որ իր երկիրը չի պաշտպանի ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի գործողութիւնները Իրանի միջուկային էներգիայի ծրագրի դէմ: Ռուսաստանը նոյնպէս յայտարարեց, որ չի պաշտպանի ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի բանաձեւերը: Այսօր էլ Պեկինի եւ Մոսկուայի դիրքորոշումները կարող են վճռորոշ լինել:

Աղբիւր՝ www.armenianow.com

ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ Է ՄԵՐ ԹԵՄԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Ազատ Սաթեան

Ոմանց իրանահայ համայնքի ներկայ հասարակական կառոյցը կարող է թուլ քաւարար, միւսներին՝ անբաւարար: Բայց չեմ կարծում, պնդողներ լինեն, թէ դրանք աշխատում են անթերի: Իրականութիւնն այն է, որ համայնքային հարցերով հետաքրքրուող բոլոր խմբաւորումներն էլ համակերպել են եղածի հետ եւ այսպէս, թէ այնպէս համոզուել, որ պիտի աշխատեն այդ կառոյցների ներսում, եթէ ուզում են «մի բան անել»:

Տարիներ շարունակ այդպէս է մտածել նաեւ տողերիս գրողը, հետեւաբար, այն ինչ յանձնում են ընթերցողի ուշադրութեանը անձնական նկատումների արդիւնքն է:

Ամենեւին նպատակ չունեն թերագնահատելու որեւէ մէկի աշխատանքը, բայց անձամբ բաւարարածներից չեմ, չունեն նաեւ փոփոխութեան պատրաստի տարբերակ, բայց համոզուած եմ, որ միայն աւանդոյթի եւ սովորութեան հետ համակերպելը այնքան էլ արդիւնաւէտ չէ:

Իրանահայութեան քաղաքացիական իրաւունքները

Մինչեւ Իրանում սահմանադրական կարգերի հաստատումը, իրանահայ համայնքի իրաւական խնդիրները կարգաւորուել են արքայական հրովարտականների եւ նահանգային ու գաւառական իշխանաւորների որոշումների հիման վրայ: Իսկ իշխանութիւնների մօտ համայնքը ներկայացրել են եկեղեցին, յանձինս թեմակալ առաջնորդի եւ իշխանութիւններին մօտ կանգնած հայ անհատների, առանց յստակ իրաւական սահմանումների: Նոր Զուղայում գոյութիւն է ունեցել նաեւ թաղապետ: Թաղապետները, որ կոչուել են նաեւ *քալանթար* կամ *քեադխուդա*, իրականում եղել են պե-

տական պաշտօնեաներ եւ նշանակուել են տեղական իշխանաւորի կողմից: Թաղապետը կարող էր նաեւ լինել վերջինիս վստահութիւնը վայելող հայազգի անձնաւորութիւն:

Սահմանադրական կարգերի հաստատումից ի վեր (1905), հայ համայնքը, ըստ սահմանադրութեան պաշտօնապէս ճանաչուել է որպէս կրօնական փոքրամասնութիւն, որով նրան իրաւունք էր տրուում ազատօրէն դաւանել իր կրօնը եւ ընտանեկան հարցերում (ամուսնութիւն, ժառանգութիւն) առաջնորդուել իր դաւանած կրօնական օրէնքներով:

Սրանով, կարելի է ասել, քաղաքացիական իրաւունքի տեսակետից իրավիճակը էական փոփոխութիւն չկրեց, այլ օրէնքով

ամրագրուեց այն, ինչ արդէն իսկ գոյութիւն ունէր որպէս չգրուած օրէնք: Այսօր եւս համայնքը ներկայացնում են թեմակալ առաջնորդն ու թեմական խորհուրդը, որոնց իրաւունքները, ըստ պետական սահմանադրութեան, սահմանափակուում են դաւանաբանական եւ ընտանեկան խնդիրներով. «Ահալէ շախսիէ»:

Պետական իշխանութիւն եւ ազգային իշխանութիւն

Համայնքը ներկայացնում եւ գործերը վարում է «Ազգային իշխանութիւն»-ը:

«Պատգամաւորական ժողով»-ը ընտրուում է ժողովրդի կողմից, որն էլ ընտրում է «Թեմական խորհուրդ»։ սրա կողմից նշանակուում են մարմիններ, իսկ այս բոլորին ի

ԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐԸ




Պատգամաւորական Ժողովի դիւան եւ Թեմական Խորհուրդ՝ «Ազգային իշխանութեան» օրէնսդիր եւ գործադիր մարմիններ: Սակայն «Ազգային իշխանութիւն» անւանումը չափազանց յաւակնոտ է, որովհետեւ համայնքը ազգ չէ, ոչ էլ համայնքային կառոյցն է իշխանութիւն:

պաշտօնէ նախագահում է նոյն պատգամաւորական ժողովի կողմից ընտրուած թեմակալ առաջնորդը: Վերջինիս պարագային ընտրութեան հնարաւորութիւնը խիստ սահմանափակ է եւ, կարելի է ասել, թեմակալ առաջնորդները կաթողիկոսի կողմից նշանակուում են անսահմանափակ ժամկետով: Թեմերի կանոնադրութիւնները երեւութապէս կազմուում են 1860-1863 թթ. արեւմտահայութեան համար կազմուած «Ազգային սահ-

մանադրութեան» հիման վրայ, սակայն դրանք յարմարեցուում են նաեւ երկրի «Կուսակցութեանց եւ հասարակական միաւորումների օրէնք»-ին եւ հաստատուում են պետութեան կողմից: Համայնքային ընտրութիւնները կատարուում են ՆԳ Նախարարութեան հսկողութեամբ: Համապատասխան նախարարութիւնների հսկողութեամբ են կատարուում նաեւ համայնքային մարմինների հասարակական գործերը, ըստ համա-

պատասխան օրէնքների, կառավարական որոշումների ու շրջաբերականների:

«Ազգային իշխանութեան» եւ պետութեան փոխյարաբերութիւնները հիմնականում կարգաւորուում են Թեմական Խորհրդի կամ սրա



վստահած անձանց միջոցով եւ ամբողջովին անվերահսկելի են համայնքի անդամների կողմից: Բանակցութիւնները գրեթէ երբեք քննութեան չեն դրուում, ոչ Պատգամաւորական Ժողովում, եւ ոչ էլ հրապարակայնօրէն: Այս բոլորը «Ազգային իշխանու-

թեանը» ձեռնտու է, համայնքի մօտ ստեղծում է որոշ ինքնավարութեան պատրանք: Այսպիսով «Ազգային իշխանութիւնը» իր ձեռքում է պահում համայնքի ղեկը, այսինքն ապահովում է իր «իշխանութիւնը», եւ իր հսկողութիւնից դուրս որեւէ շփում պետական

օրգանների հետ առանց այլեւայլութեան համարում է «ազգային դաւաճանութիւն»:

Պատական մարմին

Տրամաբանական է, իհարկէ, որ համայնքի ներկայացուցիչը պետութեան մօտ լինի համայնքի

կողմից ընտրված մարմինը կամ անձը, բայց հարկաւոր է նաեւ, որ այդ մարմինը, ոչ միայն բարոյապէս, այլ նաեւ պաշտօնապէս հաշւետու լինի իրեն ընտրող համայնքին, մինչդեռ գոյութիւն չունի նման հաշւետութեան որեւէ մեխանիզմ:

Իրականում չկայ նաեւ ոչ մի իրաւական մարմին, որը ի գօրու լինի պատասխանատութեան հրաւիրել կամայ, թէ ակամայ խախտումներ թոյլ տւած համայնքային մարմին կամ անձին: Նոյնիսկ կարելի է ասել, որ այս տեսակետից անցեալներում թեմակալ առաջնորդները աւելի լայն իրաւասութիւններ են ունեցել, քան այսօր: Նրանք կարող էին, որոշ պարագաներում ներքին կարգով պատժել յանցաւորներին: Պատգամաւորական ժողովը ընտրում է, իհարկէ, «հաշւեքննիչ մարմին», բայց ոչ մի, այսպէս կոչւած, ներքին կանոնադրութեան մէջ նշուած չէ, թէ օրէնքով ինչպէս կարելի է հետապնդել ազգային ունեցւածքին հասցւած վնասի դէպքերը:

Այսօրայ դրութեամբ խախտում կատարած անդամը շատ-շատ կարող է հեռացել, իսկ դա էլ ընդհանրապէս կատարուում է սուս ու փուս, մեր ձէնը մեր տնով անելու ժողովրդական իմաստութեամբ, իսկ պաշտպանելու կամ վրիպումների համար ներողութիւն խնդրելու բարոյական պարտականութիւն որեւէ մէկը կը զգա՞, թէ՞ ոչ, դա թողնւած է միայն մարդու խղճին եւ արժանապատուութեան զգացումին: Չենք վարանում ասելու, որ այս իրավիճակը պարունակում է, ինչպէս Յայաստանում են ասում, լուրջ կոռումպցիոն ռիսկեր:

Ինչպէս ասացինք, սահմանադրութեամբ ամրագրւած են կրօնական փոքրամասնութիւնների կրօնական եւ ընտանեկան «ահալէ շախսիէ» իրաւունքները, աւելի ճիշտ, արտօնւած է դրանց տնօ-

րինութիւնը ըստ մեր եկեղեցական օրէնքների: Այս տեսակետից համայնքի անդամների եւ «Ազգային Իշխանութեան» միջեւ տարածայնութիւն չկայ, եւ եթէ թեմը, որպէս կրօնական կառոյց սահմանափակէր միայն այդ խնդիրներով, այսպիսի բազմաճիւղ կառոյցի կարիք երեւի չլինէր: Բայց ազգային կառոյցը իր ուսերին է վերցրել նաեւ կրթական, բարեգործական, մշակութային, մարզական, քաղաքական եւ կալւածա-տնտեսական խնդիրներ: Ահա այս բնագաւառներում է, որ հայ քաղաքացին ասելիք ունի, բայց, մնալով երկութեան մէջ, նա յստակ չի պատկերացում իր իրաւունքները, մի կողմից, որպէս երկրի քաղաքացի, իսկ միւս կողմից, որպէս հայ-քրիստոնեայ:

«Ազգային Իշխանութիւն» անւանումը ինքնին չափազանց յաւակնոտ է, որովհետեւ համայնքը ազգ չէ, ոչ էլ համայնքային կառոյցն է իշխանութիւն: Այլ խօսքով, թիրիմացութիւն կայ «ազգ» եւ «իշխանութիւն» քաղաքական եզրերի կապակցութեամբ: Կայ նաեւ մի ներքին երկութիւն, որը եւ պակաս թիրիմացութիւնների առիթ չի տալիս: Դա հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութեան խնդիրն է: Ինչպէս գիտենք «թեմերը կրօնական կառոյց է, իսկ մեր պարագային «Թեմական Խորհուրդը» առաւելաբար զբաղուում է ոչ կրօնական գործերով:

Բայց յաւակնութիւնը բերում է նաեւ պատասխանատութիւն: Յաճախ ենք լսում պատասխանատու մարդկանց կողմից հնչող արտայայտութիւնը. «Մենք պետութիւն չենք», որը նշանակում է, մեզանից մի սպասէք այն, ինչը պետութեան պարտականութիւնն է, իսկ մենք վերցրել ենք մեզ վրայ:

Բայց որո՞նք են պետութեան պարտականութիւնները սահմանադրութեամբ ճանաչւած կրօնական փոքրամասնութիւնների

նկատմամբ, որպէս այդպիսիք: Նման պարտականութիւններ եւս ոչ մի հիմնական օրէնքով նախատեսւած չէ:

Այս տեսակետից կրօնի ուսուցիչների պաշտօնականացումը, ինչպէս նաեւ վերջին տարիներին պետութեան կողմից փոքրամասնութիւններին յատկացուող բիւջէն համեմատաբար նորութիւն են եւ, ինչքան գիտենք, չունեն պատշաճ իրաւական հիմնաւորում:

Փաստօրէն հայութիւնը Իրանում հայ-քրիստոնեայ է մնացել առանց պետական հովանաւորութեան, վայելելով միայն կրօնական մեծամասնութեան յարաբերական հանդուրժողականութիւնը, որի համար միշտ էլ շնորհակալ է եղել եւ պարտքի տակ էլ չի մնացել, լիուլի կատարելով օրինապահ եւ ստեղծագործ քաղաքացու իր պարտականութիւնները, որպէս քաղաքացի, առանց յստակ պատկերացում ունենալու իր իրաւունքների մասին, որպէս փոքրամասնութիւն:

Ժողովրդավարակա՞ն է մեր թեմերի կանոնադրութիւնը

Յաճախ է խօսուում մեր թեմական կանոնադրութեան ժողովրդավարութեան մասին, որը խիստ կասկածելի է, որովհետեւ ժողովրդի կողմից ընտրւած Պատգամաւորական ժողովում ի պաշտօն» մէկական ձայնի իրաւունք ունեն նոյն ժողովին հաշւետու թեմակալ առաջնորդը, թեմական Խորհուրդը եւ կրօնական Խորհուրդը: Այս երեք ձայնին գումարուում է 1/7 հոգեւոր դասի ներկայացուցիչների ձայնը, որոնք իրականում նշանակուում են նորից նոյն ժողովին հաշւետու կրօնական Խորհրդի եւ սրան հաշւետու պաշտօնեայ հոգեւորականների կողմից: Պատգ. ժողովին վճռական ձայնի իրաւունքով մասնակցում են նաեւ գրեթէ հայաթափւած շրջանների մէկական անդամներ, որոնք, հակառակ թեմի կանոնադրութեան,



Պատգամատրական Ժողովը ընտրում է «հաշտեքնհի մարմին», բայց ոչ մի կանոնադրության մեջ նշված չէ, թե օրէնքով ինչպէս կարելի է հետապնդել ազգային ունեցածքին հասցած վնասի դէպքերը:

նութեանը: Պարզ է, որ նման պայմաններում խօսել մեր համայնքային կառոյցի ժողովրդավարութեան մասին անհեթեթութիւն է:

Քիւջէ

Յայտնի է, որ որեւէ հաստատութեան քիւջէի վերլուծութեամբ միայն կարելի է ճիշտ գաղափար կազմել նրա որդեգրած քաղաքականութեան մասին:

Թեմի ընթացիկ քիւջէն հիմնականում գոյապահպանման քիւջէ է եւ զարգացման բաժինը նրանում չնչին տեղ է զբաղեցնում: Սա այն բնագաւառն է, որը ամէնից շատ կարիք ունի մասնագիտական վերլուծութեան, բայց բուջէն այս տեսակետից երբեք քննարկման առարկայ չի դառնում եւ ամէն տարի որոշ տոկոս յաւելումով հաստատում է:

Թեմերի համագործակցութիւն

Իրանահայ երեք թեմերը (թէ ինչո՞ւ երեք, դա դեռ ինքնին հարց է) միմեանց հետ չունեն որեւէ կազմակերպչական կապ եւ ամենեւին շահագրգռւած էլ չեն դրանով, ընդհակառակը նրանք խիստ նախանձախնդիր են իրենց անկախութեան նկատմամբ, եւ նրանց միջեւ համագործակցութիւն գրեթէ գոյութիւն չունի, թէւ Արամ Ա Կաթողիկոսը իր այցելութիւնների ժամանակ յայտնել է, թէ կեանքի է կոչելու թեմերի համագործակցութեան յանձնախումբ: Ի՞նչ արած, սա էլ է տիպիկ հայկական: Եթէ նոյն կաթողիկոսական աթոռին եւ նոյն կուսակցութեանը ենթակայ թեմերը միմեանց չեն հանդուրժում, ուրեմն ընդդիմադիրները հանդուրժողականութեան ակն-

ոչ թէ ընտրուում են ժողովրդի ուղղակի քւէով, այլ նշանակուում են տեղի վարչութեան կողմից, որը մեծ մասամբ ենթակայ է հաշտետու Թեմական Խորհրդին: Եթէ սրան աւելացնենք, որ, ըստ կանոնադրութեան, գործող թեմականի կողմից են նշանակուում նաեւ ընտրական յանձնախմբերը, եւ նրա տրամադրութեան տակ են թեմի բոլոր հաստատութիւնները՝ պաշտօնեաներ, ուսուցիչներ, ազգային գոյքից օգտուողներ եւ այլն,

ապա պարզ կը դառնայ, թէ ինչպիսի պատնէշներ պիտի յաղթահարի որեւէ ընդդիմադիր ուժ սոյն Պատգ. Ժողովում երբեւէ մեծամասնութիւն կազմելու համար: Աւելացնենք, որ սահմանադրութիւնից այս կողմ ծանօթ քաղաքական պատճառներով իրանահայութեան մէջ չի կարողացել ինքնահաստատուել որեւէ այլ աւանդական, թէ նոր ընդդիմադիր ուժ, որը կարողանար ինչ-որ չափով հակակշռել գործող իշխա-

կալիք, երեւի, պիտի չունենան: Կարելի՞ է մտածել, որ «օպտիմալացումը» կը տարածի նաեւ երեք թեմերի վրայ, եթէ ոչ նրանց միացման, առնուազն որոշ համատեղ ծրագրերի իրականացման տեսակետից:

Խորհրդարանի պատգամաւորներ

Այս իրաւական բացը ինչ-որ չափով կարող են լցնել խորհրդարանի հայ պատգամաւորները, որովհետեւ իրականում ըստ երկրի սահմանադրութեան նրանք են համայնքի լիիրաւ ներկայացուցիչները, բայց նրանք նախ օրէնսդիր ուժի ներկայացուցիչ են եւ ոչ գործադիր, իսկ երկրորդ՝ «Ազգային» կանոնադրութեան մէջ նրանց մասին չկայ ոչ մի յօդուած, այսինքն՝ «Ազգային իշխանութեան» համար պատգամաւորները ընդհանրապէս գոյութիւն չունեն: Նրանք Պատգամաւորական ժողովի նիստերին հրաւիրուում են միայն խորհրդակցական ծայրի իրաւունքով, թէւ դա էլ կանոնագրով նախատեսուած չէ, ուստի եւ ՊԺ-ը կարող է նրանց չհրաւիրել (սա նախընթաց ունեցել է): Իսկ քանի որ չգրուած օրէնքով պատգամաւորների ընտրութիւնը մեծապէս պայմանաւորուած է «Ազգային իշխանութեան» հաստատումից, վերջինս նրանց համարում է իրեն հաշուետու, եւ պարզ է, որ խորհրդարանի պատգամաւորից համայնքային առումով քիչ թէ շատ անկախ գործունէութիւն չի կարելի ակնկալել, իսկ «Ազգային իշխանութեան» գործունէութեան վրայ հսկողութիւն՝ առաւել եւս: Իրականում խորհրդարանի պատգամաւորները ակելի ակտիւ են հայ անհատ-պետութիւն, մասամբ նաեւ «Ազգային իշխանութիւն»-պետութիւն յարաբերութիւնների ասպարէզում, իսկ համայնք-«Ազգային իշխանութիւն» յարաբերութիւնների տեսակետից նրանք գրեթէ ոչ մի դեր չունեն:

Հասարակական կազմակերպութիւններ եւ միութիւններ

Հաւասարակշռութիւնը ինչ-որ չափով կարող էին պահել հասարակական կազմակերպութիւնները, եւ անկախ մամուլը: Արդէն բազմիցս ասել ու կրկնել է, որ իրանահայ համայնքում գործող միութիւնների հիմնական մասը իրականում իշխող կուսակցութեան մասնաճիւղերն են եւ «Ազգային իշխանութեան» գործակաւորները: Սրանք կոչուում են «քոյր» միութիւններ, վայելում են «Ազգային իշխանութեան» հովանաւորութիւնը եւ լիովին օգտուում են համայնքային սեփականութիւն հանդիսացող գոյքից: Ինչպէս գիտենք, անցեալ վարչակարգի օրերին բացառուած էր ինչ-որ ձեւով այլախոհ համարող կազմակերպութիւնների եւ մամուլի գոյութիւնը, ինչ վերաբերում է ներկային, թէւ պետութիւնը պաշտօնապէս հաստատել է մի շարք նման կազմակերպութիւնների ծրագիր կանոնագիրը, եւ արտօնել նրանց գոյութիւնը, սակայն «Ազգային իշխանութիւնը» ոչ մի օրէնքով հաստատուած պարտաւորութիւն չունի նման միութիւնների նկատմամբ, եւ ամենեւին պարզ չէ կամ ակելի շուտ պարզից էլ պարզ է, թէ ինչ չափանիշերով են միութիւններից ոճանք արժանանում «քոյր» ընտանեկան կոչմանը, իսկ միւսներ, որպէս ապօրինի ծնունդներ, զրկուում նման շնորհից, ինչը նշանակում է մեկուսացում համայնքային կառոյցից: Իսկ ընդհանուր առմամբ դժուար է բաւարար համարել գործող միութիւնների հասարակական եւ նշակութային ակտիւութիւնը համայնքում:

Մամուլ եւ տեղեկատւութիւն

Մեր համայնքային կեանքի ամենացաւոտ խնդիրը երեւի հէնց տեղեկատւութեան պակասը կամ իսպառ բացակայութիւնն է: Հա-

մայնքի միակ օրաթերթը ցայսօր «իշխանութեան» սնամէջ հաղորդագրութիւնները իրապարակելուց այն կողմ չի անցել: Հազարադէպ են նաեւ համայնքային խնդիրների աշխոյժ քննարկումները:

Այսօր համայնքում լսուում են նաեւ այլ ձայներ: Ողջունելի է նաեւ, որ վերջերս մամուլի թղթակիցներին արտօնել է ներկայ գտնել Պատգ. ժողովի նիստերին: Նորութիւն պիտի համարել նաեւ Թեհրանի Թեմական Խորհրդի նախագահի մամուլին տուած հարցազոյցները, բայց դեռ վաղ է խօսել դրա ընթացքի եւ արդիւնքների մասին: Կունենա՞նք, արդեօք, եղած մամուլի ներկայացուցիչները կարողութիւն, նման կառոյցի խառն ու խուճուճ ժողովներից հանել լուրջ եզրակացութիւններ, որոնց վերլուծութեամբ հնարաւոր լինի անել գործնական առաջարկներ եւ, որ ամենակարեւորն է, կը կարողանան նրանք համայնքային խնդիրների շուրջ անտարբեր մեծամասնութեան մօտ ստեղծել աշխոյժ հետաքրքրութիւն:

Եկեղեցի եւ դպրոց

Մեր քննարկման սահմաններից դուրս մնացին այս երկու հիմնական հաստատութիւնները, այն պատճառով, որ մեր խնդիրը մեր քաղաքացիական իրաւունքներն էին: Այստեղ այսքանը միայն ասենք, որ եկեղեցին չպիտի լինի զուտ ծիսական ներկայութիւն, իսկ դպրոցներում բացի ընդհանուր որակից, վերանայման կարիք են զգում հայերէն առարկաների դասաւանդման ծրագիրը:

ՎԱՍԱԿ ՄԱՂԱՔԵԱՆ՝ ԴՐԱՄԱՏՈՒՐԳ

Բախտիար Յովակիմյան

Երեւանցի դրամատուրգների մէջ իր առանձնայատուկ տեղն ունի Վասակ Մաղաթեանը, որը մտահոգւելով հարեւան ժողովուրդների կուլտուրական առաջադիմութեան հարցերով, հայերէնից բացի, պիեսներ է գրել նաեւ Ատրպատականի թուրքերէնով: Նրա մի շարք պիեսները տասնեակ տարիներ խաղացւել են Անդրկովկասի, Միջին Ասիայի, Իրանի եւ այլ երկրների թատրոններում: Մասնաւորապէս, մեծ հետաքրքրութիւն է առաջ բերել երեք լեզուով հայերէն, ռուսերէն եւ թուրքերէն նրա գրած «Կռթկոյն» (գողացած հաւի կռթկոյն) թոյն ի նկատի ունենալով) վոդեվիլը, որտեղ ամէնքը խօսում են իրենց մայրենի լեզուով եւ խառնաշփոթ ստեղծում:

Վասակ Յամբարձումի Մաղաթեանը (28.5.1845-27.11.1914) ծնւել ու վախճանւել է Երեւանում, եղել է Երեւանի նահանգական դատարանի թարգմանիչ, թատերական գործիչ:

Սովորել է Մոսկւայի «Լազարեան» ճեմարանում, 1860-ականներին մասնակցել է աշակերտական ներկայացումներին: Յետոյ զինուորական կրթութիւն է ստացել Պետերբուրգում, ուր 1871-ին լոյս է ընծայել «Փնջիկ» վերնագրով իր բանաստեղծութիւնների միակ ժողովածուն՝ Նեազմի գրական անունով:

1880-ական թւականներից, արեւելեան մի քանի լեզու տիրապետող Մաղաթեանն աշխատանքի է անցել Երեւանի նահանգական դատարանում, որպէս թարգմանիչ: Աշխատանքի բերումով շփուելով տարբեր ազգութեան ու բնաւորութեան տէր մարդկանց հետ, նա իր պիեսների համար

նախատիպեր է ընտրել:

Մաղաթեանի գրած առաջին պիեսը «Կռթկոյն»-ն է, որի համար հիմք է ծառայել տեղական կեանքից առնւած մի կենցաղային տեսարանի նկարագրութիւնը: Աստիճանաւոր «չինովմիկ» Բորչչեւսկու սպասաւոր Իւանը տարել է աշտարակցի այգեպան Պողոսի էջը եւ թուրք Մուրադի որդի Ահմեդի հաւը: Նրանք եկել են բողոքի եւ պահանջում են վերադարձնել իրենց ապրանքը եւ, ի վերջոյ, ստանում: Բորչչեւսկու կնոջ Ելեւայի միջոցով Մաղաթեանը քարոզել է ո՛ր երկրում, որ ապրում ես, պէտք է սովորես տեղացիների լեզուն, որ ծիծաղելի փաստի առաջ չընկնես: 1876-ից սկսած այն շատ բեմերում է խաղացւել, ընդ որում նաեւ Բաքւի ադրբեջանցի դերասանների կողմից, հայ կերպարի համար հրաւիրելով հայ դերասանի: 1884, 1893, եւ 1909 թւականներին, թուրք Մուրադի մշտական դերակատարը եղել է ինքը՝ պիեսի հեղինակը: Պիեսը տպագրւել է 1880-ին:

Վասակ Մաղաթեանի գրչին են պատկանում նաեւ հայերէն գրած «Մադոյի կտակը», «Սուտ բանկիր», ինչպէս եւ թուրքերէն գրած «Թամահքեարլը դուշման կազանը» (Ազահութիւնը թշնամի է վաստակում) պիեսը, որը 1891-ից խաղացւել է նաեւ «Բաջի վա գարդաշ» (քոյր եւ եղբայր), «Գիւզա գիւրմիան շալ» (Աչքին չզնացող շալ) եւ այլ պիեսներ:

Ամէնից շատ խաղացւել է «Քոյր եւ եղբայր» պիեսը, որի առաջին բեմադրութիւնը հեղինակի կողմից տեղի է ունեցել Երեւանում, 1882-ի Փետրւարի 2-ին, կրկնւել Ապրիլի 2-ին, որով հիմք է դրւել Երեւանի թուրք-ադրբեջա-



նական թատրոնին:

Երեւանի «Պսակ» թերթի խմբագիր Վասակ Պապաջանեանը Խրիւսի ծածկանունով թատերախօսական է գրել «Պարսկական թատրոն» վերնագրով, ուր պատմում է նրա ստեղծման պատմութիւնն ու բովանդակութիւնը:

Կոմեդիայի մէջ ներկայացւած պատմութիւնը արել է Երեւանի քաղաքային ուսումնարանի ուսուցիչ Մաշադի Իսմայիլը, թէ ինչպէս միջին դարերում, Թաւրիզում կատարւած անցքի տխուր պատմութիւնը դեռ կենդանի է ժողովրդի մէջ, եւ որ ինքն այն լսել է Թաւրիզում եղած ժամանակ՝ «նշանաւոր մարդկանց նոյնանման անցքի խօսակցութեան ժամանակ» (Պսակ, 1882, N7, Ապրիլ 10-ը):

Պատմութիւնը սովորական է, հարուստ վաճառական Աղա Ֆարաջը, հորից մնացած հարստութիւնը ազահաբար զաւթելու նպատակով քրոջը՝ Գիւլսանամին զրկում է իր բաժին կարողութիւնից: Աղջիկը դիմում է դատարան, պատմում իսկութիւնը, ուրանում իր ժառանգական իրաւունքը եւ ամուսնանում իր սիրած տղայի հետ:

Պիեսի գործող անձինք եւ դերակատարները եղել են՝

Աղա Ֆարաջ (Թաւրիզի վաճա-

ԱՄԲԱՐՁԻՉՆԵՐԸ

Շանթ Բաղդասյան

ռական) պարոն Նեազմի, այսինքն հեղինակը՝ Վասակ Մադաթեանը:

Գիլսանամ (նրա քոյրը)- օր. Շարուբանը խանում.

Ֆաթալի Միրզա, Շահզադա (Թաւրիզի դատաւոր)- պարոն. Ռոստոմ խան Աբաս կուլի խանով.

Մահամադ կուլի (նրա սենեկապետ ծառան)- պրն.Միրզա Խալիլ հաջին.

Մոլլա Գիւսէյն, Զաբիբ, Իսմայիլ եւ Ֆարաշ:

Վ. Մադաթեանը Աղա Ֆարաջի դերը կատարել է՝ «ամենայն գովեստի արժանի», ներկայացնելով թոյլերի մօտ յանդուգն, մեծերի մօտ՝ ստորաքարշ: Եւ քանի որ դա եղել է առաջին թուրքերէն բեմադրութիւնը, միւս դերակատարները բեմ են բարձրացել առաջին անգամ:

Գիլսանամի դերը թէեւ ծրագրում յայտարարած է եղել օրիորդ Շարուբանը խանում, բայց իրականում կատարել է մի հայ տիկին եւ այն էլ՝ «բաւականին յաջող»: Թերեւս դա լինի Մադաթեանի մայրը՝ Սոնա Մադաթեանը, 70-ական թւականներին դերասանուհին, կամ 1880-1881թթ. Երեւանի թատերախմբերում աշխատած Եւփիմէ Մադաթեանը, որին համոզել է Վ.Մադաթեանը խաղալու իր հետ, իր պիեսում:

«Թամահքարլըղ դուշման կազանըր» պիեսը եղել է Ստեփան եւ Ալմա Սաֆրազեանների մշտական շրջագայութիւնների խաղացանկի հիմնական գործերից մէկը:

Չետաքրքրական է, որ Բուխարայի Էմիր Միր Սէյեդ Միր Աբդու Ասադ խանի Թիֆլիս գալու կապակցութեամբ, 1894-ին նրա համար ներկայացրել են Վ.Մադաթեանի «Կըռք-կըռք» եւ «Բաջի վազարդաշ» պիեսները, Անդրկովկասի թատրոնների լաւագոյն ուժերով՝ Յովհաննէս Աբէլեանի (Զայ), Լադօ Մեսիփշիլիու (վրացի) եւ Նիկոլայ Բիագիի (ռուս) մասնակցութեամբ:

Դեղին դպրոցական հանրակառքը կանգնեց կանգառում եւ աղմուկ բարձրացաւ: Երեխաները, որ ձմեռային հագուստներով անելի մեծ էին թւում, քան ամռանը, դուրս վազեցին՝ իրարանցում ու խառնաշփոթ: Ուսապարկերը վեր ու վար էին թռչում երեխաների շալակին ու նրանք էլ համաչափ ուսապարկերի շարժմանը՝ բղաւում էին անհոգ ծիծաղում՝ մէկը միւսին քաշքշելով, անգամ ծեծկռտելով: Գագիկը մի փողոց տարածութեամբ, ինչպէս միշտ կանգնած՝ նայում էր դպրոցականների անկաշկանդ արշաւանքին:

Սօտեմուն եմ Գագիկին ու ձեռքս նրա թիկունքին դնելով, իմաց եմ տալիս, որ արդէն պիտի գնանք՝ ժամանակին աշխատավայրում լինելու համար: Առանց մի բառ փոխանակելու ճանապարհուում ենք:

Այստեղ ձմեռը բաւականին խիստ է ու տխուր: Ի հարկէ տխուր է նրանց համար, ովքեր ուրախամալու պատրուակ չունեն, կամ էլ չեն գտնել նախորդ եղանակներում: Ի դէպ խոստովանեմ, որ յաճախ ես հանդիպում մարդկանց, որ բրդէ գլխարկները իրենց գլխին քաշած ու գոլոշին քթներից ու բերաններից դուրս փչելով, սրտի տակից ծիծաղում են, անցնում են կողքից ու չեն էլ պատկերացնում թէ դու ինչ ես զգում: Մայթերում, մարդիկ ինչքան իրար մօտից են անցնում, այնքան հեռու են միմեանց հասկանալուց... Այո՛, տխուր է ձմեռը, մամանաւանդ այն ժամանակահատուածում, երբ բնութիւնը աշնան դեղինը, նարնջագոյնն ու կարմիրը հաւաքել տարել է իր հետ ու տակաւին ձիւ-

նից էլ լուր չկայ: Մի խօսքով խիստ մոխրագոյն են այս օրերը: Առաջին ձեռն հետ, մի քիչ թեթեւանում ես, մտածում եմ՝ «չէ՛, օրերը կանգ չեն առնելու, նորից լաւ գոյները կը գան»: Այսպիսի օրերից մէկում էր, որ Գագիկն ու ես քայլում էինք դէպի աշխատավայր:

Իւրաքանչիւր առաւօտ, ժամադրում էինք քաղաքի տարրական դպրոցի առջեւ, յետոյ գնում էինք մօտակայ սրահարանը, ոտքի վրայ սրճում ու աշխատանքի էինք գնում: Գագիկը միշտ այնտեղ էր ինձանից անելի շուտ, այնքան որ տեսնէր թէ ինչպէս են ուրախանում երեխաները: Մի տեսակ իրեն տանջում էր, ինքն իրեն յիշեցնելով որ՝ «Յէյ տեսնում ես, ամէն ինչ այլ կերպ էր կարող լինել: Կարող էիր դու էլ գայիր ու կանգնէիր այստեղ մի այլ կարգավիճակում: Չէ՛, անելին, դու էլ կարող էիր շատերի նման ուշանայիր երեխային դպրոցից վերցնելուց, ու տղադ նստած դպրոցի պատի տակ՝ շոկոլադէ պաղպաղակ լզեր ու քեզ յուշէր՝ տես՛, երբ ուշանում ես, ես էլ պաղպաղակ եմ առնում, ի՞նչ թոյլտութեան մասին է խօսքը, եթէ դու անպարտաճանաչ ես...»:

Այո, սա Գագիկի Գողգոթան էր ու իմ նորօրեայ պարտականութիւնը՝ պարտաճանաչ Գագիկին յիշեցնելու, որ նա դեռ պիտի ապրի: Անգամներ տարբեր ձեւերով ջանացել էինք նրա կեանքը փոխել: Անուշը մի առ ժամանակ մտածել էր Գագիկին ծանօթացնել իր շրջանի ընկերուհիներից մէկի հետ, եւ անգամներ մեր տանը կազմակերպել էր հիւրասիրու-

թիւններ՝ Գագիկին ծանօթացնելու Արաքսի, Անահիտի, Ռոզմարիի, Յասմիկի եւ ... հետ ու այսպէս երկար-բարակ անունների ցանկ ու հիւրասիրութիւնների շարան: Սակայն Գագիկի մօտ այլեւս ոչ մի քիմիա չէր աշխատում: Մի անգամ առաջարկեցինք, որ տեղափոխւէր, գնար մերձակայ քաղաքը՝ մի առ ժամանակ եղբօր հետ ապրելու: Չհամոզուեց: Ախր, մտածում էինք, որ այս փոքրիկ քաղաքի ամէն ինչը նրան իր անցած տագնապալի օրերն է յիշեցնում: Չստացուեց: Անգամ առաջարկեցինք նրան, որ գնայ ու երեխայ որդեգրի. ասացինք կը մեծացնես, դպրոց կը տանես: Ոչ մի պատասխան: Հէնց այնպէս նայեց ինձ ու Անուշին ...

Քայլում ենք կողք-կողքի, լուռ: Ներս ենք մտնում մեր մշտական սրճարանը՝ երկու գաւաթ սուրճ ու երկու Croissant ենք պատւիրում: Գագիկը մօտենում է սնդուկին վճարելու համար, ես էլ սրճարանի մի անկիւնը նստելով, խոժոռած աչքերով լուսամուտից դուրս եմ նայում: Սրճարանի միւս մայթում, հսկայ հիւրանոց են շինում ու երկու հսկայ ամբարձիչ կռունկ բերել են հողատարածքի ճիշտ կենտրոնում կանգնեցրել: Այս երկու ամբարձիչները ինձ աւելի են տխրեցնում: Հսկայ ամբարձիչների ու մոխրագոյն քաղաքի պատճառով սկսում եմ մտածել մարդկային ցաւի մասին: Երեւի ցաւը հոգու խորքից դուրս քաշելու համար այսպիսի ամբարձիչներ են պէտք, հսկայ վիթխարի, երկաթէ, մոխրագոյն... Իսկ Գագիկի ցաւն ի՞նչ, ինչքա՞ն մեծ է նրա ցաւը...

Միանգամայն մտքերս մի այլ թռիչք են կատարում, հիմա նրանք անցած տարւայ աշնանային երեկոներից մէկում են, քաղաքի զբօսայգում: Այն օրը, որ ժամադրուել էի Գագիկի հետ՝ զանգել ու ասել էր՝ «Պիտի քեզ հանդիպեմ, հէնց հիմա... կարելոր ու

լա՛ւ լուր եմ ասելու»: Ես էլ մի կէս ժամից զբօսայգում կանգնած էի: Պարզ յիշում եմ, կարծես երէկ լինէր: Տեսայ նրան, որ հեռւից գալիս էր, աւելի շուտ վազում էր: Տաս քայլից նկատեցի նրա ժպիտը՝ դէմքը փայլում էր. հասաւ ինձ ու պինդ գրկեց, սեղմ: Այդ դէպքը առաջին ու վերջին անգամն էր, որ տեսայ Գագիկը գրկում է: Վայրկեաններ այդպէս մնացինք, յետոյ ինձ թափ տալով ասաց՝ «Արա՛մ, ամուսնանո՛ւմ եմ: Արփիկին առաջարկեցի, չմերժեց: Անգամ համբուրեցինք, շուրթերը համով էին, նոյն համը, որ այս ամբողջ տարիներում ենթադրել էի իմ թաքուն երազներում... Արա՛մ, ես ամենաերջանի՞կն եմ, չէ՞...»

Գագիկը գալիս նստում է դիմացս՝ սուրճի գաւաթներն ու Croissant-ները սեղանին դնում: Երջանկութիւնը ինչքան սպառնող է, խիստ ժամանակավրէպ, անցողիկ, շուտ վերջացող՝ ինչպէս շոկոլադէ պաղպաղակը: Այն պաղպաղակը, որ չծնւած երեխան կառնի ու յենւած դպրոցի պատին կուտի, երբ դու ուշանաս...

Նայում եմ Գագիկին, նրա աչքերում երկու ամբարձիչներ են տեղադրուել՝ հայեացքը սառել է դիմացի կառուցւող հիւրանոցի վրայ:

Լաւ յիշում եմ այդ հիանալի երեկոն, յիշում եմ նրա իւրաքանչիւր բառը, որ ինչպէս էր նկարագրում Արփիկին՝ «Քայլող հրեշտակ է, Արամ, թափանցիկ, բարութիւնից անգամ աներեւոյթ է դառնում, արի՛, արի՛ տանեմ քեզ գինի հիւրասիրեմ», եւ այդ գիշեր ես մեռակ Արփիկի մասին լսեցի:

Չգիտեմ, ինչո՞ւ միանգամից կարօտում եմ Անուշին՝ կէս ժամ չի բաժանւել ենք միմեանցից աշխատանքի գնալու համար՝ խիստ կարօտել եմ նրան: Տեսնես Գագիկը ի՞նչ է զգում հիմա: Կարօտո՞ւմ է: Բջջայինը գրպանիցս հանում եմ ու կարճ հաղորդագրութիւն թողնում՝

«Անուշա, ինչպէսա՞...»

Սրճարանը թողնում ենք, անցնում ենք միւս մայթը: Բջջայինս դիմզ-դիմզ՝ կարճ հաղորդագրութիւն ստանալու յաղթական ձայնը՝

«Անուշդ լաւա, իսկ իմ Անուշը ոնցա՞» եւ էլեկտրոնիկ ժպիտ բջջայինի մոնիթորում:

Գագիկի ծանր ու տխուր հայեացքն եմ զգում: Մէկ տարի արդէն կը լինի, որ նրա բջջայինը դիմզ-դիմզ չի արել... Վատ եմ զգում, առաւօտը շուտ ի՞նչ հաղորդագրութիւն թողնել էր այն էլ Գագիկի մօտ, այն էլ Անուշին...

Արագ գրում եմ՝ «Լաւ, ճաշին կը խօսենք ու բջջայինը թաքցնում եմ գրպանումս:

Գագիկի ձեռքը թիկունքիս է՝ բարի ժպտում է: Իր ժպիտով կարծես ասում է՝ «Իմ մեղքը չէ, որ իր չծնւած տղան դպրոցի առջեւ պաղպաղակ չի ուտելու...»: Գագիկը մեղմ, բայց յստակ ձայնով ասում է՝ «Շնորհակալ եմ, որ համբերում էք ինձ...»

Ի՞նչ ասեմ: Գլխով եմ անում ու ես էլ ձեռքս թիկունքին եմ դնում:

Ասելու ոչ մի բառ չեմ գտնում՝ միայն զգում եմ, որ ծմեռը տխուր է, նամանաւանդ երբ դեղինը, նարնջագոյնն ու կարմիրը գնում են ու սպիտակից դեռ լուր չկայ... Ուզում եմ Անուշի հետ խօսել, բայց մի՛նչեւ ճաշ պիտի համբերեմ...

Քայլում ենք ու ամբարձիչները լուռ մեզ են նայում...

ՆՈՐՈՎ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻՆԵՐՈՎ ԵՒ ՀԱԻԱՏՈՎ...

ՎԵՐԱՆՈՐՈՎԵՅ ՀԱՂԱՐԾԻՆԻ ՎԱՆԱՀԱՄԱՆԻՐԸ

Արմինե Սելիբ-Իսրայելեան

Պատմական յուշարձաններ, տուրիզմի զարգացմանը նպաստող արժէքներ լինելուց զատ այս հոգեւոր կառոյցները հայ քրիստոնեայի մշտանորոգ հաւատի խորհրդանիշներն ու կենդանի վկաներն են, որոնք արժանի ուշադրութեան կարիք ունեն այսօր... Խոնարհւած, կիսաւեր վանքեր ու մատուռներ, ուր ժամանակին հնչել են պատարագ ու շարական՝ լեռնագագաթների վրայ կղզիացած դառնում են բնութեան մասնիկները, ծածկուած ծառերով ու բուսականութեամբ... Իսկ աղօթքները միշտ կենդանի են... Ու երեւի երկնային կամքի շնորհիւ էր նաեւ, որ Հայաստանի հրաշալի եկեղեցական կառոյցներից մէկը՝ Հաղարծինի վանահամալիրը հիմնովին վերանորոգւեց ու համալրուեց նաեւ կից հիւրատնով, դիլիջանեան գողտրիկ այս վայրը դարձնելով այցելուների համար աշխարհիկից կտրուելու եւ բնութեանը մերձենալու հրաշալի անկիւն, ուր մի քանի ժամերի ընթացքում կարող ես առնչել բնութեան բոլոր երեսօյններին միանգամից... Վանահամալիրում այցելուների ու զբօսաշրջիկների հոծ խմբերի կարելի էր հանդիպել անգամ վերանորոգման ընթացքում:



- Եկեղեցին մնաց գործող, նրա դռները միշտ բաց են ուխտաւորների ու այցելուների համար, - ասում է Հրայր քահանայ Բեջանեանը, ով սպասարկում է Նոյեմբերեանի տարածաշրջանն ու ժամանակաւոր նաեւ Հաղարծինի վանահամալիրը, եւ սիրով պատասխանեց մեր հարցերին:

- Ո՞ր թւականից է սկսւել վերանորոգումը...

- Արդէն հինգերորդ տարին է ինչ Արաբական Էմիրաթներից Շարժայի շէյխը յանձն առաւ վերանորոգումը եւ գումար տրամադրեց:

- Կրօնական երկխօսութեան իմաստ ունի՞ մնան քայլը:

- Կարելի է այդպէս ասել, բայց ոչ մի քաղաքականութիւն չկայ դրա տակ թաքնւած, սա բարի կամքի դրսեւորում է: Մեր ժողովրդի մշակոյթին, պատմական արժէքների հանդէպ ունեցած սերն ու յարգանքը մղեցին այդ մարդուն մնան վերաբերմունք դրսեւորել: Աւելի խորը ծանօթանալով Հայաստանի պատմութեան հետ ցանկացաւ մնան քայլ անել:

- Հայր Սուրբ, արդեօք Ամենայն Հայոց Կաթողիկոսը նպաստե՞լ է այս ամենին եւ որքանո՞վ է զգալի էջմիածնի մասնակցութիւնն այս ամենին...

- Վեհափառ Հայրապետը ոչ միայն նպաստել է, այլ նրա բարձր

տնօրինութեան, կարգադրութեան եւ հովանու տակ է միշտ եղել Հաղարծինի վանքը, հիմա առաւել եւս, երբ սկսւել են վերանորոգման աշխատանքները: Բացի Շարժայի շէյխի ներդրած գումարները Վեհափառ Հայրապետը բաւականին գումար ներդրեց վանական միաբանական շէնք կառուցելու համար:

- Ինչպէս տեսնում ենք Հաղարծին վանահամալիրը կարծես թէ նոր կառոյցներով է համալրուում...

- Հայաստանում գտնուող եզակի կառոյցներից կայ այստեղ... Նոր կառոյցներ չեն աւելանում, այլ վերանորոգւում են: Այստեղ թագաւորական գերեզմանատուն կար, որի վրայ կառուցւել էր

մատուռ, որը աւերել էր, եւ հիմա այն վերականգնուում է: Վանական համալիրի մէջ ոչինչ չի աւելացել:

- Հայաստանում կան եկեղեցիներ, որոնք կորցնում են պատմական գրաւջութիւնը վերանորոգելուց յետոյ կատարած շինարարական աշխատանքներում տեղ գտած նորամուծութիւնների շնորհիւ: Արդեօ՞ք ուշադրութիւն դարձել է, որ այս համալիր կառոյցի վերանորոգման մէջ պահպանուում է պատմական շունջը:

- Հին հիմքերի վրայ են յենուում վերանորոգողները, պատի վրայ կան հին քարերի մնացորդները, որոնց նմանութեամբ եւ կրկնօրինակմամբ կատարուում են աշխատանքները: Վանական համալիրում պահպանուած են հայ հին բոլոր ճարտարապետական ոճերը եւ այստեղ ոչինչ չի աւելացել, պարզապէս մենք փորձում ենք վերականգնել կառոյցը: Քարը տրաւերտին քարն է, որով ի սկզբանէ կառուցուած է եղել տրաւերտինով, կան պատերի մէջտեղներում քարեր, որ բազալտէ քարեր են, բայց վերանորոգումը կատարել է հիմնական տրաւերտինով: Սեղանատունը նոյնպէս վերանորոգուում է եւ նախկինում, ինչպէս որ մեր նախնիներն են պատրաստել կոճղերով աթոռներն ու փայտէ սեղանը, այդպէս էլ մենք նորոգումից յետոյ պիտի նոյնը դնենք իր տեղում:

- Սենա՞կ էք ծառայում այս վանահամալիրում, Տէր Հայր: Պատարագներ այժմ էլ են մատուցւո՞ւմ, անկախ վերանորոգման աշխատանքներից: Մի՞շտ է այպէս մարդաշատ:

- Ինձ հետ միասին Հայր Արիստակէսն է այստեղ, որ վերադարձել է Գերմանիայից:

Վերանորոգման աշխատանքները չեն խանգարել ծիսակատարութիւններին: Այո: Մկրտութիւններ, պսակադրութիւններ միշտ

եղել են ու լինում են Հաղարծինի վանքում: Վանքը վերաբացւեց 1990 թականին, Գուգարաց թեմը հիմնեց Արսէն Արքեպիսկոպոս Բերբերեանը, վերաբացեց այդ թեմը եւ Հաղարծինը իբրեւ նստավայր էր համարուում: Եւ այդ օրւանից մինչ հիմա Հաղարծինի վանքը եղել է մարդաշատ:

1991-ին օծւել են Հաղարծինեանց վանքում, Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցում եւ Նոյեմբերեանում քահանայելով հանդերձ նրա սահմաններում, Իջեւանում 2000 թից մինչեւ 2004 թիւը Հաղարծինի վանք՝ գիշերցրեկ ապրելով:

- Որքա՞ն մկրտութիւններ արած կը լինէք:

- Ամէն մկրտութիւն գրանցել ենք, բոլորը պահպանուում են Նոյեմբերեանում: Երկու հազարից աւելի կարծում են...

- Կուզե՞նայի, որ մի հետաքրքիր բան պատմէիք, կապուած այս վանքի հետ... Հրաշքներ կամ ինչ-որ խորհրդանշական բան եղե՞լ է...

- Խորհրդանշականն այն է, որ Հաղարծինը իր ազդեցութիւնը կարողացաւ թողնել շէյխի վրայ, իր գեղեցկութեամբ եւ մարդը քրիստոնեայ չլինելով հանդերձ կամեցաւ վերանորոգել այս հոգեւոր օջախը: Հրաշքներ եղել են, ես հաւատում եմ հրաշքների եւ դրանք կան: Հիւանդներ են բժշկւել եւ այլն, կարելորը, որ հաւատով մօտենաս քո արած ծեսին ու կարգին եւ Աստծուն լսելի կը դառնայ քո աղօթքի ձայնը: Աստուած այստեղ է, Աստուած օգնում է եւ Աստծոյ միջոցով մարդիկ բուժւել են:

- Հաղարծին անունն ինչի՞ հետ է կապուած, ի՞նչ ծագումնաբանութիւն ունի:

- Հաղարծին անունը մի քանի ստուգաբանութիւն ունի, որոնցից մէկը Հաղարծին՝ այսինքն, արծիւների խաղալու վայր է նշանակուում:

Համալիրը կառուցուած է 10-13-րդ դարերում, առաջին եկեղեցին կառուցուած է 10-րդ դարում կոչուում է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, 11-րդ դարում կառուցուում է գաւիթը, որը շատ կարելոր է եղել վանական կեանքի մէջ, հիմա կարծես այդքան էլ չի օգտագործուում իր իմաստով: Սուրբ պատարագի ընթացքում պահ կայ, որ սարկաւազը ասում է .«Մի ոք երեխայից եւ մի ոք թերահաւատից», այսինքն, բոլոր չնկրտուածները, թերահաւատներն ու անմաքուրները պիտի դուրս գան, երբ սկսուում է պատարագը եւ աղօթեն գաւիթում եւ այնտեղից հետեւեն պատարագի ընթացքին, բայց հիմա դա կարծես չի պահպանուում:

- Իսկ աղանդաւորներ շա՞տ կան Դիլիջանի, Իջեւանի շրջանում: Կա՞ն արդեօք նրանց մէջ այսպէս ասած՝ դարձի եկածներ:

- Աղանդաւորականներին ես երբեք շատ չեմ ասում եւ արժէք չեմ համարում: Դարձի եկածներից եզակի դէպքերից մէկը Նոյեմբերեանում էր: Երկար աշխատելուց յետոյ երկու հոգի ոչ միայն դարձի եկան, այլ նաեւ մկրտեցին եկեղեցում եւ դա եզակի դէպքերից է: Նրանք ծնունդով աղրբեջանաբնակներ էին, հիմա ապրում են Դեբեդաւան համայնքում եւ դարձի եկան: «Եհովայի վկաներ» էին, որ դարձի եկան:

- Ձրոյցի աւարտին, Տէր Հայր հայցում ենք Ձեր օրհնութիւնը, այնպէս, որ Աստծոյ կամքով շուտ վերադառնանք այս Աստուածընկալ վայրը, որ Հաղարծինն է...

- Ես աղօթում եմ Աստծուն, խնդրում, որ Աստուած լսի Ձեր աղօթքի ձայնը, ձեր սրտի ցանկութիւնը, որովհետեւ ամէն մի մարդ, որ մտնում է եկեղեցի իր դրացու նկատմամբ վատ տրամադրուած, թշնամացած չի մտնի: Մարդիկ միշտ մտնում են աղօթելու իրենց ընտանիքի համար,



իրենց ուխտը վերանորոգելու համար, իրենց յաջողութեան եւ առողջութեան համար եւ ես էլ աղօթում եմ ձեզ համար, որ Աստուած ձեր ուխտը վերանորոգի, վերահաստատի եւ տայ ձեր սրտի ցանկութիւնը, որը ոչ միայն ձերն է այլեւ մեր ազգինն է, որ լինենք միասնական, հզօր եւ մեր աղօթքով դիմենք մեր Աստծուն եւ ստանանք մեր սրտի ցանկութիւնը:

- Շնորհակալութիւն զրոյցի ու Ձեր օրհնութեան համար, Տէր Դայր:



Ի՞ՆՉ ՈՒՏԵՆՔ ԵՒ ... ԻՆՉՈ՞ՐԻ (Բ. ՄԱՍ)

Դոկտ. Մեհմեդ Օզ

Ամսական սննդակարգը

Երբ սննդի մասին պարզ իրականությունները այսքան խճճուած են ու լի բարդութիւններով, չզարմանաք, եթէ նոյնքան պարզ ու մոդայիկ սննդակարգերը ունենում են տխուր վերջաւորութիւն: Մարդկանց տեսադաշտը լի է կշռի կրճատումը խոստացող խենթերով, որոնք եկել են ու գնացել, իւրաքանչիւրը մարդկանց թողնելով յուսախաբութեան ու յուսահա-

տութեան մէջ, եւ ոչ աւելի առողջ վիճակում՝ նախկինի համեմատութեամբ:

Սննդամթերքների ամենավտանգաւոր պիտակներից մէկը, որը յայտնւել է վերջին տասնամեակներում, «առանց ճարպ» պիտակն է: Այս երկու փոքրիկ բառերը մեղքերի թողութիւն էին պարգեւում շատ ուտողներին եւ այն պատրանքն էին ստեղծում, որ իբր թէ պատառի չափն ու շաքարի պա-

րունակութիւնը կարելոր չէ: Սննդամթերք արտադրողները, սկսեցին շահագործել սպառողների սարսափը ճարպերից եւ բնական ճարպը հանել իրենց արտադրանքներից: Սակայն, քանի որ այսպիսով կորում էր սննդի համն ու հիւսւածքը, դա փոխարինում էին աւելացնելով՝ աղ, շաքար եւ թանձրացնողներ: Մարդիկ օրըստօրէ սնւում էին աւելի անհիւ սննդով, սակայն դրա տեղը ստանում էին ահագին չափերի այլ բաղադրիչներ, որոնք վնասակար էին նրանց համար:

Միւս տեսակի մոդաները նրանք էին, որ խիստ սահմանափակում էին սննդատեսակների ընտրութիւնը: Օրինակի համար կաղամբի սուփի եւ գրէյվֆրութի դիետաները, որոնց հետեւորդները հաւատում էին, որ գտել են նոր հրաշագործ սնունդ, որի շուրջ կարելի է ծրագրել մի ամբողջ սննդակարգ: Սննդակարգ, որը խոստանում էր մէկ շաբաթում կրճատել կշիռը 4.5 կիլոյով: Երկու պարագաներում էլ իրապէս տեղի է ունենում կշռի արագ կորուստ, սակայն հիմնականում ջրազրկման հաշիւին: Այս սննդակարգերը ո՛չ առողջարար են եւ ո՛չ երկարատեւ կիրառելի. իսկ կորած կշիռը վերադառնում է նոյն արագութեամբ, ինչ հեռացել էր:

Նորերս տեղի ունեցաւ Աթրինգի ցնցումը, որն սկիզբ առաւ 2002 թւականին, «Նիւ Եօրք Թայմզ» թերթում հրատարակած մի յօդուածով: Աթ-

Մի ընդարձակ ուսումնասիրութեան համաձայն, չոր տարւայ ընթացքում, զանազան սննդանիւթերի յաւելեալ քանակները, կշռի ելեւէջների առումով, յանգում են տարբեր արդիւնքների:



**Չոր մրգերը
համեմատած
տապակած
գետնախնձորի հետ**



Աւելի երկար է տեւում ծամել

Եփած օսլան արագօրէն լուծւում է

Պարունակում են ճարպեր եւ ֆիբրեր, որոնք աւելի երկար է տեւում մարսել

Արագ բարձրացնում է ձեր արեան գլուկոզայի մակարդակը

Ստամոքսը աւելի լիքն է մնում եւ դուք աւելի երկար էք կուշտ մնում

Մարմինը արտադրում է ինսուլին, որի հետեւանքով քաղցածութիւն էք զգում

Հետեւաբար աւելի քիչ էք ուտում սնման յաջորդ ժամին

.... հետեւաբար սնման յաջորդ ժամին աւելի շատ էք ուտում

Կորցնում էք
0.26 կիլոգրամ

Կշիռը բարձրանում է
1.52 կիլոգրամ





ԳՈԿՏ. ՕՉԻ ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐԸ

Ընկոյզը հարուստ է օմեգա-3 ճարպերով. ընկոյզը թրջելով մասամբ վերանում է նրա դառնութիւնը

Բանջարեղէնի հիւթը լրացնում է սննդակարգի թերութիւնները



քինգի սննդակարգը (մեծ քանակութեամբ միս, շատ քիչ քարբոհիդրատներ, ներառեալ մրգերի եւ բանջարեղէնի բաղադրիչ բնական շաքարը) կարճ ժամանակ տարածւած էր եղել դրանից 30 տարի առաջ, սակայն «Նիւ Եօրթ Թայմզ»-ի յօդուածը այն վերակենդանացրեց եւ վերածեց լուրջ մշակութային երեւոյթի: Շուկան խրախուսեց այդ մոլութիւնը, վերափոխելով իր մենիւները, որպէսզի համապատասխանեն նոր մօտեցմանը, եւ հանելով իւրաքանչիւր քարբոհիդրատ մոլեկուլ, քարբոհիդրատից զուրկ պիտակներ փակցւեցին ուտելիքների փաթեթների վրայ: Աւանդական ձեւով հացթուխները սկսեցին տրտնջալ (ոչ մի քարբոհիդրատ նշանակում է ոչ մի բազետ), եւ այդ դիետային խիստ հաւատարիմ հետեւորդները սկսեցին տառապել իրենց շնչառութեան մէջ քեթասիդօսիսի վատ հոտից, երեւոյթ, որը պատահում է այն ժամանակ, երբ գլիքոթէնի քանակը խիստ պակասում է:

Իհարկէ կշիռ կորցնում էիր. այն էլ մեծ քանակութեամբ: Սակայն հարցն այն

էր, որ այդ կորուստը հնարաւոր չէր պահպանել: Քանի որ երբ արգելում ես մեծ թուլ սննդատեսակներ, շուտ թէ ուշ, մարդու ստամոքսը ապստամբում է: Իսկ երբ մարդկանց սննդակարգից հանում ես խմորը, հացը, բանջարեղէնը, եւ մրգերը, այդ ապստամբութիւնը տեղի է ունենում աւելի շուտ քան ուշ: Աւելին՝ թոյլատրւած սննդատեսակները, յատկապէս միսը, կարող է մարդուն հասցնել ազրեսիութեան ու դիւրագրգռման, ինչը որոշ բժիշկների կարծիքով կարող է սրտի կաթածքի պատճառ դառնալ:

Սառութ Բիչ եւ այլ Աքթինգանման դիետաները աւելի ախորժելի են դարձնում թոյլ տալով աւելի մեծ քանակութեամբ միրգ եւ բանջարեղէն: Դրանցից ամենանորը բոլորին ծանօթ պալէօ դիետան է, որն այսպէս է հիմնաւորւում. քանի որ մարդու գենոմը իր այսօրայ ձեւով սկիզբ է առել պալէոլիտիկ շրջանում (մօտաւորապէս 2.6 միլիոնէ 10 միլիոն տարի

առաջ), մենք գենետիկ առումով ծրագրւած ենք ուտել այն ինչ հասնելի էր այն օրերում: Պալէօ դիետան շեշտը դնում է ոչ-իւղալի մսերի եւ ձկան, թարմ մրգերի եւ առանց օսլայի բանջարեղէնի վրայ: Այն արգելում է կաթնամթերքը, հատիկները եւ ընդեղէնը, քանի որ դրանք մարդու սննդակարգի մէջ յայտնուել են միայն սրանից 12000 տարի առաջ: Որոշ կլինիկական փորձերի համաձայն, այս սննդակարգը իրօք իջեցնում է սրտանօթային հիւանդութիւնների վտանգը, բարձր արեան ճնշումն ու բորբոքումները, ինչպէս նաեւ պակսեցնում է երեսի բշտիկները, զարգացնում է ֆիզիկական ունակութիւնները եւ օգնում է կշռի նւազեցմանը:

Սակայն սննդի մեծ թուլ մասնագէտներ մտահոգութիւն են յայտնել կաթնամթերքի եւ հատիկների բացարձակ բացառման վերաբերեալ: Մեծ մասշտաբով հետազօտութիւնների արդիւնքում պարզուել է, որ դրանք իջեցնում են յատուկ քաղցկեղների եւ սրտանօթային հիւանդութիւնների վտանգը: Աւելին՝ չպիտի մոռանանք, որ քարանձաւի մարդիկ աւելի կարճահասակ էին մեզանից եւ մահա-



առաջ, որ քարանձաւի մարդիկ աւելի կարճահասակ էին մեզանից եւ մահա-



ԴՈՎՏ. ՕՉԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Սպանախի օգուտների մասին բոլորը գիտեն:

Մածունի յաելեալ պրոտեինի պատճառով աւելի երկար ժամանակ էք կուշտ զգում ձեզ:



Չաւար — իւղով



Բուսակերական ճիւղով այս ճաշատեսակը լի է կապսայինով, որը պայքարում է բորբոքումների դէմ



Թեմփէն (տոյա պրոտէին) սրճագոյն բրնձով փլաւի հետ

նում էին 40 տարեկանի շուրջ: Դրա պատճառը մասամբ այն էր, որ այդ սննդակարգը նրանց չէր ապահովում վարակների (կամ վայրի կենդանիների սուր ժանիքների) դէմ: Անձամբ կը գերադասէի այնպիսի սննդակարգ, որի արդիւնքում պահպանէի մտային եւ ֆիզիկական աշխուժութիւնս՝ թռուներիս հետ խաղալու համար, քան մահանայի երիտասարդ եւ հիանալի առողջ:

Անհատական սննդակարգ

Գաղտնիք չէ, որ այն ինչ յարմար է եւ առողջարար մի երիտասարդ տղայի համար, անպայման լաւը չէ մի միջահասակ մարդու համար, կամ այն ինչ սննդարար է համարուում երեխային կաթ տուող, 20-30 տարեկան մի կնոջ համար, տարբերուում է դաշտանադադարի շրջանում գտնուող 70-80 տարեկան կնոջ համար: Սակայն, մեզ

որպէս սպառողներ, ընդհանուր խորհուրդներ են տալիս այն մասին, թէ այսինչ սննդանիւթից ինչքան ուտենք, եւ ո՞րն է բաւարար քաւորիայի քանակը եւ վիտամինների տոկոսը: Ես կատարել եմ 5000-ից աւելի սրտի վիրահատութիւն եւ խորհուրդ են տալիս հետեւել մի դիետայի՝ ցածր յագեցւած եւ փոփոխւած ճարպերով, որպէսզի խուսափենք անօթներում ճարպակոյտեր ստեղծելուց: Բայց եւ միաժամանակ դեռ չեն կարող ձեզ ասել, որ ինչու երկու հիւանդ, որոնք երկուսն էլ տասնամեակներ սնւել են մտով, կարագով եւ եփւած ուտեստներով, սակայն ունեն ամբողջովին տարբեր անժիոգրամային պատկերներ: Նորտ Կարոլինա համալսարանի սննդաբանութեան հետազոտական ինստիտուտը առաջատարն է անհատական սննդակարգի ոլորտում: Այն ուսումնասիրում է այն,

ինչ կոչուում է միւտրիգենոմիքս՝ գենների եւ դիետայի միջեւ կապը: Այս գիտութիւնը համեմատաբար նոր է, սակայն դրա հենց սկզբնական արդիւնքները ցնցող են: Օրինակի համար, մկների վրայ կատարուած փորձով յայտնի է դարձել, որ մի տեսակ պրոտէին որոշ մարդկանց մօտ ակտիւացնում է մի շարք գեններ, որոնք դերակատար են քոլեստերոլի եւ այլ իւղերի բաղադրման ու իւրացման գործում: Դա կարող է իր հերթին յանգեցնել ինսուլինի դիմադրութեանը, տրիգլիսիրիդների բարձրացմանը, եւ մի դրութեան, որը կոչուում է ճարպալի երիկամ. այս վիճակում, ճարպը հաւաքուում է երիկամներում եւ խանգարում է թունաւոր միւթերի գտման գործը: Նման գենետիկ խախտումներ ունեցող մարդիկ կարող են միմեանց նման զգայուն լինել դիետային ճարպերի եւ պիտի ուտեն

համապատասխանաբար: Մկների վրայ կատարած մի այլ հետազոտութեամբ յայտնաբերուել է մի գեն, որը յատկապէս բարձրացնում է LDL քոլեստերոլի վտանգը: Դեռ շուտ է, որ այս եւ նման նիւտրիգենոմիկ հետազոտութիւններն ուղղակիօրէն կլինիկային գործառոյթ գտնեն, բայց արդէն ժամանակն է, որ բժիշկները սննդամթերքներին դիտեն նաեւ որպէս հիւանդութիւնների կանխարգելման միջոցներ, առնուազն երբ հարցը վերաբերում է աղի, քոլեստերոլի եւ այլ նիւթերի ներառմանը, երբ անհատը զգայուն է դրանց հանդէպ: Յատուկ սննդանիւթերի հանդէպ ալերգիաները եւս այստեղ պիտի հաշիւ առնուեն: Խելացի չէ մի մարդու, որի մարմինը զլութեն չի արտադրում ցորենային ուտեստներ առաջարկել, կամ կաթ՝ այն մարդուն, որ լաքթոզը չի մարսում: Սակայն սրանց հանելը սննդակարգից՝ առանց դրանց ուրիշ բանով (կամ աւելի վատ՝ ոչ սննդարար ուտեստով) փոխարինելը եւս խելոք գործ չէ:

Քիրտ իրականութիւնը

Սննդառութեան ճակատում տեղի ունեցած բոլոր նւաճումներից ամենակարեւորը՝ սննդի եւ ֆիզիկական ակտիւիտեան միջեւ հաւասարակշռութիւն պահպանելն է: Դա իհարկէ ճիշտ է, որ առողջ կշիռ պահպանելու համար, ստացած քալորիաները պիտի հաւասար լինեն սպառած քալորիաներին: Դրանում ոչ մի խօսք: Սակայն նոր հետազոտութիւնների համաձայն, խնդիրը միայն նրանում չէ, որի ինչքան էք ուտում, այլ նրանում, որ ինչ տեսակ ուտեստներ էք ուտում: Դա աւելի մեծ ազդեցութիւն ունի կշռի վրայ:

Երբ նստում էք ուտելու, ձեր ուղեղը փնտրում է սննդարար նիւթեր, ոչ թէ քալորիա, եւ ձեզ մղում է ուտելու, մինչեւ այն ժամանակ, երբ բաւարարած կը զգաք: Սա մէկն է այն բազմաթիւ պատճառներից, որ

աւելի դժար է անցնել տապակած գետնախնձորից կամ պաղպաղակից, քան ասենք բանջարեղէնից, մրգից, հատիկներից կամ անճարպ մսից: Մարսելու մեխանիզմը եւս դերակատար է այս հարցում: Բարձր քանակի ֆիբր պարունակող սննդանիւթերը ստամոքսում աճում են եւ այդպիսով դանդաղեցնում մարսելու գործընթացը եւ յագեցածութեան առաջացումը: Հէնց այս պատճառով էլ ես յաճախ իսկական կերակրից առաջ ուտում եմ մի բուռ չոր կամ թարմ միրգ: Սպառել վերահսկած քանակութեամբ քալորիայով, ճիշտ տեսակի սննդանիւթը, օգնում է խուսափել սխալ տեսակի ուտեստներում քալորիա փնտրելուց:

Մի այլ բիրտ իրականութիւն էլ այն է, որ ի հեճուկս մեր, մեծ հաւանականութեամբ չկայ այնպիսի հրաշալի երազային ուտելիք, որն հեռու անտառներում սպասում է, որ մենք իրեն գտնենք: Բայց եւ այնպէս մենք արդէն գիտենք մի շարք հիանալի սննդատեսակների մասին, որոնք արդէն իսկ մեծ քանակութեամբ մեր տրամադրութեան տակ են: Հատապտուղները օրըստօրէ աւելի օգտակար են համարում բարձր տարիքի հիւանդութիւնների, քաղցկեղի, սրտանօթային հիւանդութիւնների, շաքարախտի եւ հոգեկան խախտումների համար, եւ պարունակում են մեծ քանակութեամբ անթիօքսիդանտ եւ ունեն հակաբորբոքային յատկութիւններ: Բրոքոլին հարուստ է ֆիբրերով եւ ապացուցուել է, որ ունի քոլեստերոլի իջեցնող յատկութիւն: Այն հարուստ է նաեւ սուլֆուրով, որը նպաստում է երկկամների աշխատանքին, եւ այդպիսով զարգացնում է մարմնի թունազերծման բնական մեխանիզմները:

Եւ ի վերջոյ, նորութիւն չէ, որ պիտի լրջութեամբ մօտենանք մարմնամարզութեանը: Հիւանդութիւնների վերահսկման եւ կանխարգելման կենտրոնները խորհուրդ

են տալիս, որ չափահաս մարդիկ, շաբաթական առնուազն 150 րոպէ մեղմ աէրոբիկ շարժումներ կատարեն (օրինակ արագ քայլել). դա նշանակում է օրական աւելի պակաս քան 20 րոպէ: Դրա փոխարէն դուք կարող էք շաբաթական 75 րոպէ կատարել աւելի ծանր մարզական գործողութիւններ, օրինակ դանդաղ վազք: Մկանների մշակման վարժութիւնները շաբաթական մէկ կամ երկու օր եւս անհրաժեշտ են պահպանելու համար կազմաւորել համաչափութիւնը եւ զագացնելու ոչ-ճարպային մկանները: Սրանք էլ իրենց հերթին նպաստում են ձեր մարմնի նիւթափոխանակութեանը: Եւ մի՛ մոռացէք, որ բոլորս մարմնամարզութեան քալորային ազդեցութիւնը չափազանցում ենք: 73 կիլօգրամ կշռով մարդը, երբ մէկ ժամ զբաղւում է միջակ աէրոբիկ շարժումներով, սպառում է 365 քալորիա, որը վատ չէ: Սակայն եթէ դասարանի աւարտից յետոյ, նա ինքն իրեն պարզեւատրի մի խնձորի փախարէն մի տաք պիրաշկիով, այդ այրած քալորիայի չափաքանակը կը վերականգնուի:

Ոչ ոք չի ասում, թէ ցանկալի կշռին հասնելը եւ այն պահպանելը հեշտ գործ է, այդուհանդերձ այն իրագործելու կանոնների ցանկը կարճ է եւ պարզ. կերէ՛ք չափաւոր, ընտրէ՛ք այնպիսի սննդամթերքներ, որոնք նմանում են այն ժամանակւան, երբ հողից աճում են (յիշէ՛ք, որ գոյութիւն չունի ճահճային ծառ), կերէ՛ք ամէն բան (իզուր չէ, որ գոյութիւն ունեն սննդանիւթերի զանազան խմբեր), մի քիչ էլ մարմնամարզութիւն: Մարդը միակ արարածն է աշխարհում, որ կարողացել է վերահսկել իր սննդի մատակարարման գործընթացը: Իսկ այժմ հարցն այն է, որ արդեօք վստա՞հ ենք, որ հէնց սնունդը չէ, որ վերահսկում է մեզ:

*Թարգմանեց՝ Լ. Սհարոնեանը
Աղբիւր՝ «Թայմ» շաբաթաթերթ*

ԱՐՈՆԵԱՆԸ ՇՐՋԱՆՅԵՅՑ ԿԱՌՍԵՆԻՆ

Արման Տ. Ստեփաննան



Հոլանդիայի Վեյկ ԱՆ Ձեռքադաբուն աւարտւեց 74-րդ Tata Steel շախմատային փառատօնը: Այս մրցութեանը մասնակցել էին աշխարհի լաւագոյն շախմատիստները: Հայաստանից այս մրցութեանը ներկայացել էին երկու շախմատիստներ՝ տղամադկանց բաժնուն Լեւոն Արոնեանը, իսկ կանանց բաժնուն՝ Ելինա Դանիէլեանը: ՖԻԴԵ-ի վարկանիշային աղիւսակի երկրորդ տեղն զբաղեցնող, Հայաստանի ուժեղագոյն շախմատիստ Լեւոն Արոնեանը իր վերջին տուրում ընդամենը 12 քայլ յետոյ համաձայնեց միաւորը կիսել ադրբեջանցի թեմուր Ռաջաբովի հետ եւ վաստակած 9 միաւորով նւաճեց 2012 թւականի առաջին սուպերմրցաշարի չեմպիոնական տիտղոսը: A մրցաշարում յաղթելու համար Լեւոն Արոնեանը պարգեւատրուեց 10 հազար եւրօ գումարով: 2-4-րդ հորիզոնականները կիսեցին Մագնուս

Կառլսենը, թեմուր Ռաջաբովն ու մրցաշարի յայտնութիւն դարձած Ֆաբիանօ Կարաունան, ով վերջին տուրում պարտութեան մատնեց Բորիս Գելֆանդին: Լեւոնը պարզապէս հրաշալի հանդես եկաւ Վեյկ ԱՆ Ձեռում: Հայ գրոսմայստերը 13 պարտիաներից 2-ում պարտուեց, 4՝ ոչ ոքի խաղաց եւ 7 յաղթանակ տարաւ: Բացի այդ Արոնեանի պարտիաները 3 անգամ լաւագոյնը ճանաչւեցին: Նշենք, որ Արոնեանը 2007 եւ 2008 թւականներին արդէն երկու անգամ նւաճել էր չեմպիոնի տիտղոսը, սակայն այսօր նա առաջին անգամ միաձայն յաղթող ճանաչւեց. 2007-ին Լեւոնը մրցանակը կիսել էր թեմուր Ռաջաբովի եւ Վեսելին Թոփալովի, իսկ 2008-ին՝ Մագնուս Կառլսենի հետ: C մրցաշարի վերջին տուրում Հայաստանի ուժեղագոյն շախմատիստուհի Ելինա Դանիէլեանը պարտութեան մատնեց Փիթեր

Հոփմանին եւ վաստակած 5.5 միաւորով բարձրացաւ 9-րդ հորիզոնական: 10.5 միաւորով չեմպիոնի կոչումը նւաճեց ռուս գրոսմայստեր Մաքսիմ Տուրովը: B մրցաշարի յաղթող ճանաչւեց հնդիկ գրոսմայստեր Պենդեալա Հարիկրիշնեան՝ 9 միաւորով: Նշենք, որ Հարիկրիշնեան իրաւունք ստացաւ մասնակցել 2013 թւականի A մրցաշարին: Մրցութիւններից յետոյ լրագրողներին տւած հարցազրոյցում Արոնեանը անդրադարձաւ վերջին տուրում իր եւ Ռաջաբովի խաղին ասելով թէ դա իր համար անակնկալ էր: Իսկ այն հարցին թէ Կառլսենին պարտուելուց յետոյ արդեօք նա յոյս ունէր, որ կրկին չեմպիոն լինէր թէ ոչ, նա ասաց. «Ես պատրաստ էի կրկին պայքարի մէջ մտնել, քանի որ սովորաբար պարտութիւնից յետոյ աւելի լաւ եմ խաղում»:



ԱՐՄԱՆ ԵՐԵՄԵԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ ԼՈՆԴՈՆՈՒ

Ռուսաստանի Կազան քաղաքում ընթացող թեքուանդոյի Եւրոպայի առաջնության մինչեւ 80կգ քաշային կարգում Արման Երեմեանը նւաճեց չեմպիոնի տիտղոսը եւ ստացաւ Լոնդոնի Օլիմպիադայում Հայաստանը ներկայացնելու իրաւունք: Քառորդ եզրափակիչում Արմանը պարտութեան մատնեց չեխ Տոմաշ Հրդիմային, կիսաեզրափակիչում հայ մարզիկը յաղթեց գերմանացի Ալբերտո Սելեստրինին, իսկ եզրափակիչում Երեմեանին չկարողացաւ դիմակայել հոլանդացի Թոմի Մոլետը:

ԱՉԱՐԵՆԿՕՆ ՉԲԱՂԵՑՐԵՅ 1-ԻՆ ՏԵՂԸ

Բելառուս թենիսիստուհի Վիկտորիա Ազարենկոն առաջին անգամ իր կարիերայում գլխաւորեց WTA-ի վարկանիշային աղիւսակը, որը կազմել է 52 շաբաթների արդիւնքով: Australian Open-ի յաղթողը շրջանցեց Կարոլին Վոզնեացկուն, ով 67 շաբաթ կարողացաւ պահել առաջին հորիզոնականը: Վոզնեացկուն շրջանցել է նաեւ Մարիա Շարապովան, ով Մելբուռնում հասաւ մինչեւ եզրափակիչ, ինչպէս նաեւ չեխ թենիսիստուհի Պետրա Կլիտովան: Ըստ WTA-ի վարկանիշային աղիւսակի Վիկտորիա Ազարենկոյին յաջողւել է հաւաքել 8585 միաւոր, իսկ Կլիտովան եւ Շարապովան հաւաքել են 7690 եւ 7560 միաւորներ:



ԹԱՅՍՈՆԸ ԵՒ ԱՂԱՆԻՆԵՐԸ



Մայք Թայսոնը շատ ջերմ ու հոգատար է աղանիների հանդէպ: Թայսոնի խօսքերով՝ աղանիների հանդէպ իր ունեցած սէրն է թոյլ տալիս նրան կարիերայի աւարտից յետոյ մնալ նորմալ հոգեբանական եւ ֆիզիկական վիճակում: Մայքն ամէն կերպ հոգում է իր թռչունների մասին: Նախկին բռնցքամարտիկը ուրախութեամբ է համաձայնել մասնակցել աղանիների միջեւ կազմակերպուող հեղինակաւոր մրցապայքարին, որը կայանալու է առաջիկայում ՀԱՀ-ում: Այդ մրցաշարի մասնակիցների թւում են լինելու նաեւ Անգլիայի թագուհի Ելիզաւետա II-ի աղանիները: 85-ամեայ թագուհին եւս սիրում է ժամանակ անցկացնել աղանիների հետ եւ յոյս ունի, որ նրանք կը յաղթեն: Ինչպէս պատմել է ինքը՝ Թայսոնը, աղանիների հանդէպ իր սէրը դեռ բռնցքամարտից առաջ է ծնւել իր կեանքում: «Իմ առաջին մարտը տեղի է ունեցել աղանու պատճառով, - ասել է Մայքը, - մի երիտասարդ, ով ինձանից խոշոր էր, վերցրեց աղանուս եւ աչքիս դիմաց կտրեց նրա վիզը: Անցաւ մի քանի տարի, բայց ես մինչ այսօր յիշում եմ այդ տեսարանը, որը խորը հետք է թողել հոգումս: Ես բռունցքներով յարձակւեցի այդ երիտասարդի վրայ եւ ծեծեցի նրան»:

1	2		5			3	6	
3					9		2	
		7	2		8			4
	1	9				8	7	3
4		3	8	9	7			1
		2	3	5		4		
							8	7
8	5			1	6	9		
2			9	8		1	4	

	8		5					
						3		7
		4		6				
		3		4			5	
	4		8		2	9		
7								6
					4	1		
9		5		7				3
	1		9					6

		9		5		2		
5								4
			9		7			
			2		4			
1								5
		3		1		6		
	3	5		6		7	2	
	1							8
	7	4		8		5	1	

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	փ	ա	ո	ա	ն	ծ	ե	մ		ա	ճ	ե	ց	ու	մ
2	ա	ղ	ե	ր	ս	ու	մ		ա	զ	ա	հ		ղ	ա
3	ո	ա	բ		տ	ա		ա	ր	ի	ն		տ	ի	կ
4	ա	ն	ու	շ	ա	ծ	ա	յ	ն		կ		ե		ա
5	ս	ու	ս		վ	ե		տ	ա	փ	ա	ս	տ	ա	ն
6	ի	ր		լ	ա		զ	ու	ն	ա	լ	ո	ր		ա
7	ր		հ	ա	յ	կ		ց	մ	փ	ո	ր		ա	խ
8	ու	տ		մ	ր	ո	տ		ա	կ	ր		ա	հ	ա
9	թ	ի	ն	ա		շ	խ	ու	ն	ա		ա	ն	ե	ղ
10	խ	ր	ա	յ	ա	տ	ու	կ		մ	ե	տ	ա	ղ	
11	ն	ա	զ	ա		ու	ր	ա	ն	ա	յ		ն		զ
12		մ	ա	կ	ոյ	կ		մ	ա	զ	ա	փ	ու	ն	ջ
13	զ	ա	ր	ա	մ		ե		տ	ի	ր	ա	ն	ա	լ
14	ե	յ		ն		ն	ր	ք	ա	կ	ա	ր		ս	ու
15	ս	ր	ա		ա	ն	կ	ա	պ		ն	ա	ո	ա	մ

Սու-Ղո-Քու

1-9 թվերը տեղադրել հորիզոնական եւ ուղղահայեաց սիւնեակներում այնպես, որ ոչ մի թիւ չկրկնւի ոչ սիւնեակներում եւ ոչ էլ 3x3 տնակներում

Անցեալ համարի պատասխան

**«Յոյս» երկշաբաթաթերթը
Վաճառում է**

«Փիթգա Լամաջու»

خیابان نارمک - میدان ۸۵

تلفن: ۷۷۸۴۳۵۳۹

**«Յոյս» երկշաբաթաթերթը
Վաճառում է**

«Շիրմարդի» կրպակ

نارمک - انتهای شیرمرد جنوبی

تلفن: ۰۹۱۲-۱۸۳۶۲۱۸

**«Յոյս» երկշաբաթաթերթը
Վաճառում է**

«Արամ» Վաճառատուն

خیابان قائم مقام فراهانی - پایین تر از میدان شعاع - پلاک ۶۴

تلفن: ۸۸۳۰۳۴۷۸

**«Յոյս» երկշաբաթաթերթը
Վաճառում է**

«ՓԱՍԱՐԳԱԴ» Շահր քեթաք

بهاره، بعد از سه‌روردی - پلاک ۱۱۳

شهر کتاب پاسارگاد

تلفن: ۷۷۶۳۱۵۱۶

Art system



Arthur , Alen , Alex



خدمات ماشینهای اداری

سرویس و تعمیر چاپگرهای لیزری جوهرافشان HP و سوزنی EPSON

تلفن: ۴-۸۸۳۱۵۳۴۳ و ۷-۸۸۳۲۱۴۳۶

فکس: ۸۸۸۳۳۰۰۰

آدرس: تهران، خیابان ایرانشهر جنوبی، پایین تر از خیابان سمیه،

شماره ۷۰، طبقه سوم، واحد ۵

تصویب طرح مجازات انکار نسل‌کشی در مجلس سنای فرانسه





ساختارهای اجتماعی جامعه ارمنه ایران

صاحب امتیاز و مدیر مسؤول:
لئون آهارونیان

دبیر تحریریه: روبرت صافاریان

شورای نویسندگان:

کارمن آذریان

لیا خاچکیان

گارون سرکیسیان

آرمینه ملیک ایسرائیلیان

مدیر هنری: لیا خاچکیان

ویراستار بخش فارسی: نسیم نجفی

وب سایت: کاجیک صافاریان

ورزش: آرمان در استپانیان

اشتراک: کاترین یعقوبی

نشانی: تهران، خیابان انقلاب، بین
ولی عصر و فلسطین، شماره ۱۰۴۸

تلفن: ۶۶۴۹۵۱۸۰

۶۶۴۹۲۶۹۳

تله-فاکس: ۶۶۴۹۵۲۰۸

نشانی وبسایت:

www.hooys.com

وبسایت فارسی:

http://farsi.hooys.com

پست الکترونیکی:

hooys@inbox.com

در این شماره

- ۲ در صفحات ارمنی این شماره
- ۴ مهاجران ارمنی در ترکیه و روسیه
دژوونار در دریان
- ۷ تصویب طرح مجازات انکار نسل‌کشی در مجلس سنای فرانسه
- ۱۰ مالاکیان و ورنوی چه طور با هم کنار آمدند؟
- ۱۲ جایگاه ارمنیان در تاریخ‌نگاری مشروطیت و مجلس
علی ططری

بخش ارمنی

- ۲ جامعه ارمنه
- ۳ طرح مجازات انکار نسل‌کشی در شورای قانون اساسی فرانسه
- ۴ سی و سومین سالگرد انقلاب اسلامی ایران
- ۶ حزب بارگاواج ها باستان هم خواهان نظام انتخاباتی تناسبی است
گایانه مگردچیان
- ۷ پی‌آمدهای ضربه احتمالی به ایران برای طرح‌های مشترک ایران و ارمنستان
آریس قازینیان

ساختارهای اجتماعی جامعه ارمنه ایران

آزاد ماتیان

- ۸ حقوق شهروندی ارمنه ایران
- ۸ حکومت دولتی، حکومت ملی
- ۱۰ ارگان قضایی
- ۱۱ آیا اساسنامه ما دموکراتیک است
- ۱۲ همکاری حوزه‌ها
- ۱۳ نمایندگان مجلس شورای اسلامی

- ۱۴ واساک ماداتیان: نمایشنامه‌نویس
باختیار هواکیمیان
- ۱۵ داستان: بالابرها
شانت باقرامیان
- ۱۷ کلیسای هاقاردزین
آرمینه ملیک-ایسرائیلیان
- ۲۰ چه بخوریم... چرا
دکتر محمت از
- ۲۴ ورزش آرمان در استپانیان
- ۲۶ سرگرمی

گوشه‌هایی از آن چه در صفحات ارمنی این شماره هویس آمده است

نیست اگر فردی از قوانین آن تخطی کند، مثلاً از اختیارات خود به نفع منافع شخصی سوء استفاده کند، چطور می‌توان او را مورد بازخواست قرار داد. البته مجمع نمایندگان یک ارگان حساسی و بازرسی نیز انتخاب می‌کند تا گزارش‌های عملکرد مالی شورای خلیفه‌گری را بررسی کند، اما این ارگان تنها می‌تواند گزارش بدهد و قدرت اجرایی و مجازات‌خاطر ندارد و در نهایت باید از سوءاستفاده‌کننده به دادگاه‌های عادی کشور شکایت کرد. به عبارت دیگر، حکومت بدون قوه قضاییه‌ای که نیروی به کار گذاشتن احکام قضایی را داشته باشد، معنی پیدا نمی‌کند.

دیگر اینکه نمایندگان ارمنه در مجلس شورای اسلامی که با رای مردم انتخاب می‌شوند در آیین‌نامه تشکیلات اداره داخلی ارمنه هیچ جایی ندارند. البته در عمل این‌ها با شورای خلیفه‌گری و مجمع نمایندگان در تماس‌اند و با آن‌ها مشورت و تبادل آرا می‌کنند، اما هیچ قانونی آن‌ها را به این کار ملزم نمی‌کند. به عبارت دیگر، این نمایندگان که می‌توانند نقش مهمی در ارتباط جامعه ارمنه با حکومت داشته باشند و عملاً چنین نقشی دارند، در *آزگابین/ایشخانوتیون* جایگاه تعریف شده‌ای ندارند. نوشته به مسائل دیگری نیز مانند همکاری سه حوزه دینی ارمنه کشور، نقش انجمن‌ها و مدارس ارمنی در نظام اداری جامعه و ضرورت تحلیل بودجه سالانه شورای خلیفه‌گری می‌پردازد.

ارمنستان: سه حزب خواهان نظام انتخاباتی تناسبی هستند

در اکتبر سال جاری میلادی در ارمنستان انتخابات پارلمانی برگزار می‌شود. این روزها بحث‌های داغی میان احزاب سیاسی ارمنستان در جریان است که حول مسئله تغییر شیوه انتخاباتی کشور به شیوه انتخابات تناسبی دور می‌زند. می‌دانیم که در بسیاری از کشورها کافی است نامزد انتخابات بیشترین رای را به دست آورد تا برنده و انتخابات گردد. این نظام انتخابات اکثریتی نامیده می‌شود. در همین روش ممکن است انتخابات تک نام یا چندنام و یا یک مرحله ای و دومرحله ای باشد. در حالی که در کشورهای دیگری، سامانه

«احوال شخصیه» نامیده می‌شوند. امور جامعه ارمنه ایران را تشکیلاتی اداره می‌کند که به زبان ارمنی *آزگابین/ایشخانوتیون* خوانده می‌شود که ترجمه‌اش می‌شود «حکومت ملی». از سوی این تشکیلات ارگان‌هایی نصب می‌شوند که کارهای جاری جامعه را انجام می‌دهند. این مجموعه تحت ریاست اسقف اعظم ارمنه قرار دارد که از سوی جاثلیق حوزه کلیسایه مستقر در لبنان مادام‌العمر نصب می‌شود. آن چه خواندید مقدمه مقاله مفصلی است به قلم آزاد ماتیان که به مسائل و تناقضات ساختار تشکیلاتی جامعه ارمنه می‌پردازد. نویسنده اشاره می‌کند که اصولاً اطلاق عنوان *آزگابین/ایشخانوتیون* به تشکیلات یک اقلیت کوچک گمراه‌کننده است، چرا که نه جامعه ارمنه ایران را می‌توان ملت دانست نه تشکیلات اداری این جامعه را حکومت. درست است که مجمع نمایندگان ارمنی هر چهار سال یک بار با رای همگانی انتخاب می‌شوند و نوعی ارگان قانونگذاری‌اند و آن‌ها شورای خلیفه‌گری را به عنوان نوعی قوه مجریه کوچک برای رفع و رجوع امور روزمره جامعه ارمنه انتخاب می‌کنند و از این نظر شباهتی وجود دارد بین حکومت واقعی یک کشور و این تشکیلات، اما نکته این است که در این میان خبری از قوه قضاییه نیست و معلوم

ساختار اجتماعی جامعه ارمنه ایران
«تا زمان استقرار نظام مشروطه در ایران، مسائل حقوقی جامعه ارمنه ایران از طریق فرمان‌های حکومتی و تصمیمات حکام ولایتی رفع و رجوع می‌شد. رهبر دینی کلیسای ارمنی و افراد ارمنی نزدیک به هیئت حاکمه جامعه ارمنه ایران را نزد حکومت نمایندگی می‌کردند بدون اینکه در این زمینه تعریف حقوقی دقیقی وجود داشته باشد. در جلفای نو، رئیس محله هم وجود داشته که به کلاتر یا کدخدا مشهور بوده است. این‌ها کارگزاران حکومت بودند و از طریق حکومت محلی منصوب می‌شدند. رئیس محله می‌توانست فرد ارمنی معتمد حاکم نیز باشد. از زمان استقرار مشروطیت جامعه ارمنه ایران طبق قانون به عنوان اقلیت دینی به رسمیت شناخته شده است و حق دارد از مذهب خود پیروی کند و در مسائل خانوادگی (ازدواج، ارث و غیره) برابر قوانین مذهب خود عمل کند. می‌توان گفت که در شرایط جدید از نظر حقوق شهروندی تغییری به وجود نیامد و آنچه به عنوان قانون نانوشته وجود داشت با قانون مکتوب مستحکم گشت. امروز هم جامعه ارمنه را رهبر کلیسا و شورای خلیفه‌گری نمایندگی می‌کنند که حقوق‌شان محدود به امور خانوادگی و شعایر دینی است که در یک کلام



سیاسی ارمنستان می تواند سرنوشت آینده سیاسی کشور را رقم بزند.

انقلاب اسلامی ایران و ارامنه

به مناسبت سی و سومین سالگرد پیروزی انقلاب اسلامی ایران، صفحاتی از این شماره به خاطرات صاحب امتیاز دوهفته نامه هویس درباره نخستین روزهای پرتلاطم انقلاب و ملاقات اسقف اعظم ارامنه ایران با امام خمینی رهبر انقلاب اختصاص یافته است. این نوشته از کتاب *روزهایی از زندگی طوفانی من* نقل شده است:

«یکی از رویدادهای مهم جامعه ارامنه ایران در آن روزها، دیدار خلیفه آرداک مانوکیان، رهبر شورای خلیفه گری ارامنه تهران با امام خمینی رهبر انقلاب بود. این ملاقات نقطه عطفی در زندگی ارامنه ایران به شمار می آید. این دیدار بازتاب گسترده ای یافت

عمق و کنه نهضت اسلامی بی نبرده و با ابراز نگرانی نسبت به حفظ جان و مال و حقوق مسیحیان سعی دارند تخم نفاق بین مسیحیان و مسلمین بپاشند.» «ارامنه ایران هشیار بوده و چنین دسایسی را در نطفه خنثی می کنند. ارامنه ایران با فروتنی ولی خلوص نیت و با اعتقادی راسخ از روزهای نخست انقلاب همگام با برادران مسلمان خود با صدور بیانیه ها و تشکیل اجتماعات و شرکت در اعتصابات و تظاهرات و راهپیمایی و منعکس نمودن اخبار انقلاب در روزنامه ارمنی زبان آلپیک و دادن شهید به مبارزه برخاسته و مفتخرند که در این نهضت عظیم سهمی گرچه بی نهایت کوچک بر عهده گرفتند.»

و فیلم و گزارش آن از رادیو و تلویزیون پخش شد و همه نشریات ایران به این دیدار تاریخی اشاره کردند. کیهان پرتیراژترین روزنامه چاپ تهران، با اشاره به این دیدار نوشت: اسقف اعظم ارامنه در ملاقات با امام خمینی: ارامنه ایران پاکسازی و نوسازی مملکت را فریضه دینی و ملی می دانند.

اسقف اعظم ارامنه همراه هیئتی ارمنی روز دوشنبه با امام خمینی ملاقات کردند. این ملاقات اسقف ارامنه، پیروزی انقلاب را به امام خمینی و مردم ایران تبریک گفتند و آمادگی ارامنه را برای ادامه مبارزه اعلام داشتند.

امام خمینی پس از سخنان اسقف از ایشان تشکر کرده و اظهار داشتند: «دستاوردهای این انقلاب مطمئناً به سود اقلیت ها نیز خواهد بود و اسلام در مورد ادیان و مذاهب انعطاف پذیر است و به آنها احترام می گذارد.»

آرداک مانوکیان، اسقف اعظم ارامنه در پایان ملاقات، نامه ای به امام تسلیم کردند. در این نامه آمده بود: «دشمنان ایران نه فقط ثروت این ملک را به یغما می برند بلکه روح و دین و ایمان و اخلاق فرزندان این آب و خاک را تاراج کرده و فساد رواج می دادند. این مبارزه نه فقط مبارزه ای است علنی بر ضد استعمار و استبداد بلکه مبارزه ای است عمیق بر علیه پلیدی ها و مبارزه حق است با باطل.»

در جای دیگر این نامه آمده است: «برخی هنوز به

«ՀԱՐՈՒՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ»
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՐԲԱՆՔԻՐԻ ԿԵՐՊ

Հայաստանի Երբանքի Կրթական Կենտրոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԲԱՆՔԻՐԻ ԿԵՐՊ

Հայաստանի Երբանքի Կրթական Կենտրոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԲԱՆՔԻՐԻ ԿԵՐՊ

Հայաստանի Երբանքի Կրթական Կենտրոն

